

30-32(320-322)
05.11.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականին եւ գիրար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՂԱՐՁ Ի ՉՐՋԱՆԱ ՅՈՒՐ

Հոկտեմբերի 21-ին ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը տեղափոխվել է գործունե և Արցախի հիմնական մշակութային կենտրոն Շուշիի հիմնովին վերանորոգված Մարիամյան օրիորդաց վարժարանում: Թեպետ օրը կիրակի էր, այստեղ էին հանրապետության ղեկավար և հոգևոր այրերը, բարձրաստիճան պաշտոնյաներ և հյուրեր, մշակույթի ոլորտի աշխատողներ և իհարկե՝ շուշեցիներ: Տոնը լիակատար էին դարձնում ոչ միայն ՊԲ գիմնորական նվագախումբը, այլև «Մռակած» պետական երգչախմբի և պարի պետական համույթի ելույթները: Փողոցում, հենց շենքի դիմաց հավաքված բազմությանը դիմելով, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն. Աղաբալյանը զուգահեռեց անցյալն ու ներկան. «Ուղիղ 100 տարի առաջ՝ 1912 թվականին, մի շատ կարևոր առաքելություն իրականացրեց Ղարաբաղի թեմի կառավարիչ Ջավեն վարդապետը. նա մեկնեց Ռուսաստան՝ այնտեղ բնակվող մեր հայրենակիցներին հորդորելու նվիրատվություններ կատարել Շուշիում կրթական գործի զարգացման համար: 1912թ. մարտի 27-ին նա Պետերբուրգում հանդիպեց մեր հայրենակից, շուշեցի հայտնի նավթարդյունաբերող Պողոս Ղուկասյանի հետ և նրան խնդրեց աջակցել Շուշիում օրիորդաց կրթության գործին: Ամիսներ անց, 1913թ. մայիսին Ղուկասյան եղբայրներից Արշակը գրություն ուղարկեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Գևորգ 5-րդ կաթողիկոսին, որով հաստատեց իր և Հակոբ, Պողոս ու Աբրահամ եղբայրների պատրաստակամությունը Շուշիում գտնվող հայրական տունը՝ մեծ բակով ու պարտեզով, ինչպես նաև 200 հազար ռուբլի նվիրաբերել Մայր Աթոռին Շուշիում իրենց վարձանեղի քրոջ անունով օրիորդաց դպրոց բացելու նպատակով»: Ապա նախարարը հավելեց, որ ուղիղ մեկ դար հետո այստեղ են հավաքվել վերաբացելու Շուշիի օրիորդաց դպրոցը, որի կանոնադրության մեջ՝ կազմված նույն 1912թ. Ղուկասյան եղբայրների կողմից, հստակ գրված էր, որ եղբայրների նվիրաբերած գումարների տոկոսները, ինչպես նաև շինությունները

պետք է օգտագործվեն միայն դպրոցի պահպանության նպատակով, որը փակվելու դեպքում այն պետք է հատկացվի մեկ այլ ազգային հաստատության: 2012թ. հոկտեմբերի 21-ին իրականացավ եղբայրների կտակը, ամեն ինչ դարձավ ի շրջանս յուր...
Շուշիի օրիորդաց դպրոցն իր գործունեությունը դադարեցրել է 1920թ. մարտի 23-ին, թուրք մուսավաթականների կողմից կազմակերպված ջարդի ու քաղաքի իրկիզման պատճառով: Դպրոցը վերաբացվեց միայն

Ն. Աղաբալյանը հայտնեց, որ դպրոցի հիմնադրումից հետո ստանձնել էր մոսկվաբնակ բարերար Կոնստանտին Մանուկյանը, ուն անունը ընդմիջտ կապված կմնա այդ շինության ու Շուշիի պատմության հետ՝ որպես ազգի նվիրյալ զավակի: Ապա նախարարության անունից նա շնորհակալագիր հանձնեց բարերարին՝ Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանման գործում ունեցած ավանդի և Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցի վերականգնման համար:

րարության հովանու ներքո կաճեն հայ երեխաները, ովքեր ամբողջ աշխարհին կներկայացնեն Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի մշակույթը:

Ն. Աղաբալյանն աջակցության համար շնորհակալություն հայտնեց նաև ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանին. «Մեզ համար մեծ պատիվ է Արցախի հայ մշակույթի պահպանման և զարգացման գործառնություններն իրականացնել այսպիսի պատմական շենքում: Մենք կանենք ամեն ինչ՝ արդարացնելու համար Ձեր հույսերը, որպեսզի հայրենիքին մատուցած մեր ծառայությունը համարժեք լինի Շուշիի ազատագրման պարգևած հպարտությանը»:

Բոլոր շուշեցիների անունից շնորհակալանքի խոսք ասաց քաղաքի հնաբնակներից Ալբերտ Խաչատրյանը, որից հետո բարերարին վերապահվեց շենքի բացման և կարմիր ժապավենը կտրելու պատիվը:

Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարզև Արբազյանը օրհնեց նորաբաց մշակույթի օջախը, ապա Նախագահը և հյուրերը շրջեցին հիմնովին նորոգված շենքում, ծանոթացան պայմաններին՝ մեկ անգամ ևս անդրադառնալով մշակութային այլ հաստատությունների տեղափոխության հարցին, որոնք դեռևս քննարկման փուլում են գտնվում: Հյուրերին հետաքրքրեց նաև Շուշիում տպագրված հին գրքերի ցուցադրանքը, որտեղ ներկայացված ամենավաղ տպագրությունը 1829 թվականին հրատարակված «Համառոտություն հայկական քերականության» գիրքն է:

Շրջելով շինության ներսում՝ հիացմունք ու հպարտություն եւ ապրում նախնիներից համար, խոնարհվում նրանց շինարարական ու ստեղծագործ քանքարի առջև: Ի պատիվ ներկայիս շինարարների՝ փաստենք, որ ամեն ինչ արված է ճաշակով, նորի և հնի զուգադրությունն էլ գեղեցիկ է իր չափի մեջ: Օրվա առթիվ կազմակերպված միջոցառումներն ավարտվեցին քաղաքի Հին այգում՝ համերգով ու արցախյան ուսուսանողների հյուրասիրությամբ:

Ս. ՄԻՆՈՅԱՆ



1992թ.՝ Շուշիի ազատագրումից հետո: Իսկ այժմ նրա վերաբացումը խորհրդանշուն է քաղաքի պատմության մի նոր փուլ, որը պիտի Շուշիին վերադարձնի նրա մշակութային դիրքագիծը և երբեմնի փառքը: Օրեցօր փոփոխվում-բարեկարգվում է Շուշին, և ամենար է չնկատել, որ ավերակները կամաց-կամաց տեղի են տալիս հայի շինարարական խանդի առջև:

Մեկենասին հանձնվեցին ևս մի քանի խորհրդանշական նվերներ, որոնց թվում՝ Արշակ Ղուկասյանի կտակի պատճենը:
Հակիրճ խոսքով ելույթ ունեցավ բարերարը, ով անչափ հուզված էր և նշեց, որ ակամատես լինելով այդ ամենին, համարում է, որ զուր չի անցել իր կյանքը: Միաժամանակ իր գոհունակությունը հայտնեց, որ այդ նախա-

ՊՈՆԶԻԱՆ՝ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՐ ԿԱՄՈՒՐԶ

Հոկտեմբերի 16-19-ը Արցախում տեղի ունեցավ նախադեպը չունեցող՝ պոեզիայի միջազգային փառատոն, որին մասնակցում էին պատվիրակներ Հայաստանի Դաշնապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, Լիբանանից, Սերբիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և Վրաստանից:
Փառատոնի մեկնարկը տրվեց Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի մեծ դահլիճում: «Պոեզիան ինքնին տոն է, իսկ տարբեր երկրներից ժամանած այսքան բանաստեղծների ներկայությունն ավելի է շեշտում օրվա տոնականությունը: Առաջին անգամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքում, նաև ամբողջ տարածաշրջանում, անցկացվում է պոեզիայի միջազգային փառատոն: Ասել է թե՛ մշակութային ավանդույթներով հարուստ Արցախում մի նոր ավանդույթ է ծնավորվում, որը, համոզված ենք, կլինի շարունակական», - նշվեց միջոցառման բացման ժամանակ:
Փառատոնի կազմկոմիտեի նախագահ, Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանն իր բացման խոսքում շեշտեց.

«Շեմարիտ է ասված, որ գրողը խաղաղության մուկետիկն է, և ես ավելի քան համոզված եմ՝ դուք ձեզ հետ խաղաղություն եք բերել Արցախ»:
Վ. Հակոբյանն այնուհետև ներկայացրեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի ողջույնի խոսքը: Կարևորելով միջոցառումը՝ երկրի ղեկավարը համոզված էր հայտնեց, որ նման փառատոններն Արցախն ավելի ճանաչելի են դարձնում աշխարհին:
Պոեզիայի առաջին միջազգային փառատոնի մասնակիցներին ողջույնի խոսք էր հղել ՀՀ մշակույթի նախարարը, որը ներկայացրեց Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը:
ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը ևս ողջունեց փառատոնի մասնակիցներին: «Ուրախ ենք այսօր ընդունել աշխարհի տարբեր երկրներից ժամանած պատվիրակներին: Հիշենք խոսքը՝ երբ գալիս է սերը, յուրաքանչյուրը դառնում է պոետ», - մասնավորապես նշեց նախարարը:
Այնուհետև փառատոնի մասնակիցները հանդես եկան իրենց բանաստեղծությունների արտասանությամբ: Արտասանություններն ընդմիջվում էին երաժշտական կատա-

րումներով, որոնք ներկայացրին միջազգային փառատոնի դափնեկիր Անահիտ Առուշանյանը և դաշնակախար Սիմոն Սարգսյանը:
Պոեզիայի փառատոնների ժամանակ սովորաբար միջոցառման կազմակերպիչների կողմից շնորհվում է գլխավոր մրցանակ: Ստեփանակերտյան փառատոնն էլ բացառություն չէր. գլխավոր մրցանակի արժանացավ Վրաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծուհի Մաղվիլա Գոնաշվիլին: Մրցանակն անձամբ հանձնեց կազմկոմիտեի նախագահ, Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը:
Բացման արարողությունից հետո մշակույթի պալատի երկրորդ հարկի ճեմասրահում տեղի ունեցավ գեղանկարչական ցուցահանդես, որտեղ ներկայացված էին «ԳԱՄարտ» նկարիչների միջազգային միության անդամների գործերը: Գնահատելով ցուցահանդեսում ներկայացված աշխատանքները՝ բուլղարացի բանաստեղծ և նկարիչ Ռոման Կիսյովը կարծիք հայտնեց, որ արցախցի նկարիչների ու քանդակագործների գործերն արված են բարձր մակարդակով և կարող են զարդարել Եվրոպայի ցանկացած գեղանկարչական ցուցասրահ:

Նույն օրը «Արմենիա» հյուրամոցի դահլիճում անցկացվեց արդի պոեզիայի զարգացման միտումներին նվիրված գիտաժողով, որտեղ ելույթ ունեցան Հենրիկ Էդոյանը (Հայաստան), Փիթեր Քաուն (ԱՄՆ), Վիլիելմ Բարչը (Գերմանիա) և ուրիշներ:
Հաջորդ օրը փառատոնի մասնակիցները եղան Արցախի մայր բուհում և պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության առջև հանդես եկան սեփական ստեղծագործությունների արտասանությամբ: Իսկ օրվա երկրորդ կեսին նրանք մեկնեցին Շուշի՝ մասնակցելու ժեմբայլով հացի 5000-ամյակին նվիրված միջոցառմանը: Շուշիի Գրքի տանը նաև կազմակերպվեց նորահրատարակ գրքերի շնորհանդես:
Երեկոյան հյուրերին իր նստավայրում ընդունեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Ծավալվեց անկեղծ ու սրտաբաց զրույց, որի ընթացքում հանրապետության նախագահը վերստին կարևորեց պոեզիայի փառատոնների մշակակությունը ժողովուրդների ու գրականությունների բարեկամության համատեքստում:
Հոկտեմբերի 18-ին տոնական միջոցառումների վայրը Մարտա-

Սեփ. Լրագրություն

ՕՐԱԳԻՐ

ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՃԱԿԵՐՏԸ

«ՄԵՆՔ ԵՂԵԼ ԵՆՔ, ՄԵՆՔ ԿԱՆՔ, ՄԵՆՔ ԿԼԻՆԵՆՔ»

Հայ-ռուսական դարավոր կապերը, բարեկամությունը ուղղված ապագային

Արդեն 8-րդ տարին է, ինչ Ռուսաստանի հայերի միությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսը, ՀՀ սփյուռքի և կրթության կազմակերպության նախարարությունների հետ համատեղ կազմակերպում է «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ստեղծագործական աշխատանքների մրցույթ ուսանողների և աշակերտների միջև: Այս տարի ևս մրցույթի թեման յուրատիպ էր և կրկին մեծ արձագանք էգտել ստեղծագործական հակումներ ունեցող ուսանողության և աշակերտության շրջանում: Որպես ստեղծագործական աշխատանքի խորագիր էր հայտարարված «Հայ-ռուսական դարավոր կապերը. բարեկամությունը ուղղված ապագային» թեման:

Արցախի աշակերտներն ու ուսանողները այս տարի ևս ցուցաբերեցին բարձր արդյունքներ: Թերևս այդ մասին են վկայում մրցույթի արդյունքները, որոնք հրապարակվել են 2012 թ. սեպտեմբերին: Հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը կայացավ հոկտեմբերին՝ «Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերը Հայաստանում և Արցախում -2012» ծրագրի շրջանակներում:

Արցախի իրենց մասնակցությունն էին բերել Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի ուսանողներ ու դպրոցների բարձր դասարանցիներ՝ թվով 200 հոգի: Արցախից ներկայացվել էին աշխատանքներ շարադրության, պատմվածքի ու հրապարակախոսական ակնարկի ձևով:



Արցախի արդյունքներով սահմանվել է յոթվեց մրցանակ՝ ճուշտ բուն համակարգիչ, որից երեքը հասցեագրվել է արցախցի ուսանողներին ու աշակերտներին. Նարեկ Դանիելյան՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի՝ ԼՂՀ-ին հատկացված Համաշխարհային տնտեսագիտություն մասնագիտության նպատակային տեղի 2011-2012 ուսումնական տարվա շրջանավարտ, Հովիկ Միրզոյան՝ «Հայաստանի ազգային ազդարարին համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտության առաջին կուրսի ուսանող, Լիանա Մեսրոպյան՝ Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 10-րդ դասարանի աշակերտուհի: Եվս 4 ստեղծագործողներ մրցանակ են շահել տարբեր անվանակարգերում. Նոնա Խաչիյանը՝ /Հայաստանի ազգային ազդարարին համալսարան հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության 1-ին կուրս/՝ «Ամենաայլախրական աշխատանք», Մանուշակ Առստամյանը՝ /Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի/՝ «Ռուս ժողովրդի հանդեպ տածած անսպասելի սիրտը», Լարիսա Մինասյանը՝ /Շուշիի հումանիտար քոլեջ/՝ «Ամենազգացմունքային աշխատանք» և Մերի Խաչատրյանը՝ /Ավետարանոցի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարան/՝ «Ամենագեղեցիկ պատմվածք» անվանակարգերում:

Նարեկ Դանիելյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը արժևորել էր իր հուշերում արմատավորված ռուս բարեկամուհի Լիդիայի դրական կերպարի վրա: Այդ բարեկամությունը ամուր է և շարունակվում է առայսօր: Սրտառուչ էր Լիանա Մեսրոպյանի պատմությունը, որի առանցքում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունն է: Ռուսիայի հզորությունից է կախված Արցախի և Հայաստանի հզորությունը. Այսպես են մտածում գրեթե բոլոր ստեղծագործողները:

Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը անձամբ հանձնեց բոլոր մրցանակները՝ երախտագիտության խոսք ասելով և հիացմունք հայտնելով բոլոր հաղթողներին: ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և ողջունեց բոլոր հաղթողներին՝ մաղթանքի ջերմ խոսքեր հղելով նրանց: Հանդիսավոր արարողությանը ներկա էր նաև ՀՀ գործերի միության նախագահ Լևոն Անանյանը:

Սեֆ. Լրագրություն

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվող մրցույթներից արդեն ավանդական դարձած «Տարվա լավագույն աշակերտ»-ի եզրակալիչ փուլը տեղի ունեցավ հոկտեմբերի 31-ին, Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տանը: Հարկ է նշել, որ մրցույթը, որի նպատակն ամփոփում է, այն է՝ աշակերտների շրջանում կրթության դերի ու նշանակության ամրապնդումը՝ իբրև անձնավորության ինքնագարգացման, ինքնահաստատման, ինքնարտահայտման գլխավոր նախապայման՝ դրանով փորձելով սովորողների մոտ հետաքրքրություն ձևավորել ինտելեկտուալ գործունեության հանդեպ, խթանել ճանաչողական ակտիվությանը և դասապրոցեսում ու արտադասարանական ժամերին ստեղծագործական գործունեությանը, նպաստել նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը, բացահայտել ընդհանուր գիտելիքները, տարեցտարի նոր բովանդակություն է ստանում հազեցածության և նպատակայնության առումով:

Շրջանային (քաղաքային) փուլում հաղթած և հանրապետական փուլ անցած՝ լավագույն աշակերտի տիտղոսի համար մրցում էին. Ստեփանակերտ քաղաքից՝ Էլինա Աղաբաբյանը (ֆիզմաթ դպրոց, 12-րդ դաս. (Անահիտ Շահրամանյանը, Ասկերանի շրջանի Խնապատի մ/դ, 11-րդ դաս), Էրիկ Թեյլանը (Մարտակերտի շրջանի Առաջածորի մ/դ, 11-րդ դաս.), ժենյա Հարությունյանը (Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 մ/դ, 10-րդ դաս.), Սաթենիկ Առուշանյանը (Շուշիի Դ. Ղազարյանի անվան մասն. երաժշտ. դպրոց, 12-րդ դաս.), Սյուզաննա Ասիրյանը (Հաղորթի շրջանի Ազոխի մ/դ, 12-րդ դաս.), Սուրեն Արզանյանը (Բերձորի հ. 2 մ/դ, 11-րդ դաս.):

Նրանց ելույթները գնահատում էր հանրապետական մրցույթային հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված էին ԼՂՀ ԿԳՆ կրթության և գիտության վարչության մասնագետները՝ վարչության պետ Ռայա Մուսայելյանի գլխավորությամբ:

Արցախի փուլերը, ինչպես նախորդ տարիներին, երեք մասից էին: «Ինտելեկտուալ մարաթոն» անվանումը կրող առաջին փուլում մասնակիցները պետք է 15 րոպեում լրացնեին դպրոցական ծրագրի շրջանակներում տարբեր առարկաներից 10 հարցերով հարցաթերթիկները: Բոլոր մասնակիցներին տրված էին նույն հարցերը: Ամենաշատ միավորները նրանք կարող էին հավաքել այս փուլում՝ առավելագույնը 20 միավոր: Ամենաբարձրը առաջածորի մասնակցի արդյունքներն էին՝ 11,5 միավոր, որն էլ վճռորոշ դեր խաղաց առաջատարի որոշման հարցում: Երկրորդ ցուցանիշը ճարտարի մասնակցին էր՝ 9,6 միավոր, երրորդը՝ ֆիզմաթի ներկայացուցչի՝ 8 միավոր:

Արցախի երկրորդ մասն ընթացավ «Դե, մտածիր» խորագրով: Նշենք, որ այս և երրորդ մասի մասնակիցների հերթականությունը որոշվեց վիճակահանությամբ: Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի տվեց երեք հարց, որի նպատակն էր վերհանել նրանց ինքնուրույն տրամաբանելու ունակությունը, հնարամտությունը, ինչպես նաև ճանաչողական գիտելիքները հայ մեծանուն գիտնականների, ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների, ազգային-պատմամշակութային արժեքների մասին: Հարցերին պետք էր պատասխանել մի քանի վայրկյանի ըն-

թացքում: Այս մրցույթի առավելագույն գնահատականը 4 միավոր էր: Երկուսական միավորներ կարողացան հավաքել միայն Էլինա Աղաբաբյանը, Էրիկ Թեյլանը և Սյուզաննա Ասիրյանը: Սյուզանը չպատասխանեցին ոչ մի հարցի,



հետևաբար և՛ միավորներ չվերցրին:

Արցախի թերևս ամենահետաքրքրականը և աշխատասարը «Շուռ ծրագիր» անվանումը կրող մասն էր՝ 10 րոպե տևողությամբ: Ըստ կարգի՝ յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է իր նախասիրությունը, հակումները, զբաղմունքը (առանց աջակից խմբի): Այնուհետև աջակիցների կողմից ներկայացվում են մասնակցի՝ ուսումնառության ընթացքում գրանցած հաջողությունները (պատվոգրեր, գովասանագրեր, մեդալներ և այլն): Առաջադրված հետևյալ թեմաներից՝ «Կրթությունը լույս է», «Սովորելու և ճանաչելու արժանիքները», «Ո՞վ է նա՝ 21-րդ դարի աշակերտը», «Իմ դպրոցը և նրա ապագան», «Նոր սերունդ», «Ուսուցիչը և ազգապահպանությունը», «Եթե կրթությունն անվճար չլիներ», «Նոր դպրոց», «Փառք հայ գինվորին», «Մենք հավատում ենք քեզ, գինվոր», «Ես հպարտ եմ, որ հայ եմ», որևէ մեկն ընտրելով՝ մասնակիցը աջակից խմբի հետ հանդես եկավ ասումներով կամ երգով, պարով կամ թատերական ներկայացմամբ: Այստեղ անգերազանցելի էր մայրաքաղաքը ներկայացնող՝ ֆիզմաթի Էլինա Աղաբաբյանը, եվ արժանիորեն ստացավ այս մրցույթի առավելագույն գնահատականը՝ 6 միավոր: Թե՛ մասնակիցը, թե՛ աջակից խումբը հանդես եկան բարձր մակարդակով: Իրոք, հպարտանալ կարելի է, որ կյանք է մտնում 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ սերունդ՝ բազմակողմանիորեն զարգացած, հնարամտություններով և կարողություններով օժտված, գեղեցիկ՝ մարմնով և հոգով: Իսկ նրա հագուստը և սանրվածքը՝ հայեցի և արցախյան նախազարդերով, որ ներկայացվեց որպես նոր սերունդի դպրոցական համագեստ, իրոք մտածելու տեղիք է տալիս:

Հաջող հանդես եկավ նաև Մարտակերտի թիմը ներկայացնող՝ Առաջածորի միջնակարգ դպրոցի սան Էրիկ Թեյլանը: Հաճելի արտաքինով, ճիշտ առողջամտությամբ ու գեղեցիկ ձայնով պատար

տանին լավ տպավորություն թողեց: Աջակից խմբով ներկայացվեց «Մունք» խճանկարային ծրագիրը. բնականաբար՝ արցախյան բարբառով: Եվ եթե աջակից խմբի ներկայացումը կապ ունենար և լրացուցիչ տեղեկություններ տար մասնակցի կարողությունների մասին, գուցե թե ավելի բարձր գնահատվեր մրցույթային հանձնաժողովի կողմից, բայց քանի որ ամբողջությամբ չէր բավարարում մր-

ցույթի կարգով սահմանված պայմաններին, գնահատվեց 3,5 միավոր: Տեխնիկական միջոցներ օգտագործելու տեսակետից աչքի ընկավ Քաշաբաղի խումբը: Այսպիսով, երեք մասից բաղկացած մրցույթի արդյունքներով՝ 17 միավորով առաջին տեղը գրավեց Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոցի աշակերտ Էրիկ Թեյլանը, որն էլ նվաճեց «Լավագույն աշակերտ-2012» տիտղոսը: 16 միավորով երկրորդ տեղում էր Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի աշակերտուհի Էլինա Աղաբաբյանը, 13,1 միավորով երրորդ տեղում էր Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցի աշակերտուհի ժենյա Հարությունյանը: Նրանք կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան պատվոգրի և դրամական պարգևի: Իսկ բոլոր մասնակիցները նախարարության կողմից պարգևատրվեցին նվերներով:

Պարգևատրումը կատարեց ԼՂՀ ԿԳՆ կրթության և գիտության վարչության պետ, հանրապետական մրցույթային հանձնաժողովի նախագահ Ռայա Մուսայելյանը: Շնորհավորելով մասնակիցներին՝ նա միաժամանակ շնորհակալություն հայտնեց դպրոցներին՝ ճիշտ ընտրություն կատարելու, այսինքն՝ մրցույթին ձևակառուցել չնոտեցնելու և բարձր կարողությունների տեր աշակերտներին մասնակից դարձնելու համար: Իրենց հերթին դպրոցների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին մրցույթային հանձնաժողովին՝ արդար և անաչառ գնահատելու համար:

Վերջում հավելենք, որ հրաշալի ելույթներ ունեցան Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի փոքրիկները: Նրանք ներկաներին ողջունեցին իրենց գեղեցիկ պարերով:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ

Հաշվի առնելով, որ դեռևս հրապարակի վրա չկան 8-րդ և 9-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի նոր դասագրքերն ու ծրագրերը, թույլատրվում է օգտվել հին դասագրքերից:

ԼՂՀ կրթության եվ գիտության նախարարություն

ԳՆԱՐԱՏԱՆԵ

ՄՐԱՆԻՑ ԷԼ ԲԱՐՁՐ ԳՆԱՐԱՏԱԿԱՆ...



«...Որպես տեսչապետ՝ նպատակահարմար են գտնում հանձնարարել կրթության բաժնիների բոլոր վարիչներին՝ կատարել վերլուծություններ (խոսքը տնօրենության անդամների կողմից լավագույն դասերի մասին է - Մ.Բ.), ձեռնարկել կոնկրետ քայլեր՝ դպրոցների ղեկավարների պատասխանատվությունն էլ ավելի բարձրացնելու համար: Առայժմ մասն աշխատանքներ կատարվում են միայն Հարդուքի շրջվարչակազմի կրթության բաժնի (վարիչ՝ Էդիկ Պետրոսյան) կողմից»:

Այս պարբերությունը վերցված է ԼԳՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանի՝ 2011-2012 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին տրված հաշվետվությունից (տես «Լուստար», 25.02.2012): Այս մի քանի տողն անգամ ինչ-որ բան է հուշում, ինչ-որ տեղ նաև ստիպում դրական կարծիք կազմել բաժնի մասին՝ ընդհանրապես և նրա վարիչի մասին՝ մասնավորապես: Նրա՝ Էդիկ Պետրոսյանի մասին ամենուր խոսում են հարգանքով ու գովեստով: Հարցրու պատահած ուսուցչի, կրթության ոլորտի ցանկացած աշխատողի՝ ու զարմանալիորեն կլեսն նույն պատասխանը:

- Ամենից առաջ նա համեստ ու օրինակելի մանկավարժ է՝ պարզ, շիտակ բնավորությամբ: Եվ ամենակարևորը՝ լավ մասնագետ է: Իսկ սա, համաձայնեք, շատ կարևոր է: Ավելին: Ես այն մտքին եմ, որ սովորական (ուրիշ հարմար բառ չգտա) ուսուցիչը կոլեկտիվ ղեկավարել, ևս առավել՝ բաժնի վարիչ

լինել չի կարող: Եվ իրավունք էլ չունի:

Ինքը՝ Է. Պետրոսյանը, որ նոր մարդ չէ ոլորտում, չի առարկում: Ու թեև մեծ ու հարուստ փորձ է կուտակել, համեստորեն վիզ է առնում, որ եղածով, ունեցածով բավարարվել չի կարելի:

- Սովորեցնելու զուգընթաց՝ ես միշտ սովորել եմ, ուրիշներից փոխադարձաբար վերցրել լավը, օրինակելին,- ասում է նա ու հավելում,- դպրոցներում լինելով՝ ես միշտ շեշտում եմ ինքնակրթության կարևորությունը, քանզի վերջինս ուսուցչի մասնագիտական գործունեության անբաժան մասն է: Հիշենք Ուշինսկու խոսքը. «Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ սովորում է: Հենց որ դադարում է սովորել, նրա մեջ մեռնում է ուսուցիչը»:

Ասել է թե՛ ինքնակրթությունը գիտելիքների և փորձի կուտակման հիմնական աղբյուրն է... Ջրուցում, իր միտքն առաջ է տանում նա, իսկ ես ունկնդրում, գլխով հավանության մասն եմ անում, ուրախանում, որ երեկվա ջախելն այսքան լավ է տրամաբանում, լավ է հասկանում իր անելիքը, ու որ գլխավորն է, պատասխանատվության զգացում ունի, իրերն իրենց անուններով կոչելու կարողություն, ռիսկ, ունակություն:

Ծնվել է բլուրներով, ոչ խիտ անտառով շրջափակված փոքր մի գյուղում՝ Քուրաթաղում (Հարդուքի շրջան): Ավարտել է տեղի ութամյա դպրոցը, ապա ուսումը շարունակել հարևան Ուխտաձորում (Էդիկու): Հետո երկու տարի (1971-1973) ծառայել է խորհրդային զգացում՝ Կիևում: Այնուհետև ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը (1981-ին) և առանց երկար-բարակ մտածելու՝ բռնել տուն-դարձի ճանապարհը:

Սկզբում աշխատել է սպորտընկերությունում, հետո շրջանային պիոներական տան տնօրեն է եղել, 1986-ին նշանակվել շրջժողկրթբաժնի տեսուչ, ապա՝ Թաղատեղի հիմնական դպրոցի տնօրեն, հետո... Այս հետո-ին հաջորդող տարիները (1991-1995թթ.) բախտորոշ են եղել և՛ իր, և՛ իմ, քո՛, նրա՛, ամբողջ Արցախի համար: 1991-1994-ին հարյուր-

ների, հազարների հետ զենք է կրել, ծառայել (պահեստագործի ավագ լեյտենանտ է) Պաշտպանության բանակի առաջին գնդում (հրամանատար՝ Արթուր Աղաբեկյան): 1995-ի սեպտեմբերին ոտք է դրել Հարդուքի դպրոց: Այս անգամ՝ որպես փոխտնօրեն: Մեկ տարի անց դարձել է տնօրեն: Մինչև 2005-ը, ամբողջ տասը տարի: 2005-ի հունվարի 1-ին առաջ է քաշվել, դարձել կրթության շրջանային բաժնի վարիչ: Ասել կուզի՝ եռապատիկ, տասնապատիկ մեծացել են նրա անելիքները, պարտականությունները: Ես ամենակի էլ այն միամիտ կարծիքին չեմ, թե դպրոցի տնօրենը պարապությունից հորանջում է, քանզի ինքս երկար տարիներ փոխտնօրեն եմ եղել ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով: Բայց եկեք խոստովանենք, բաժնի վարիչի աշխատանքային օրը ժամ ու ժամանակ չի ճանաչում:

- Պատահում է,- պատմում է նա,- տուն եմ դառնում երեկոյան 8-ին, 9-ին: Լինում են դեպքեր, երբ ավելի ուշ եմ գալիս: Դե ինչպե՞ս կարող ես գնալ հստաբերդ կամ Հին Թաղեր ու... Այսպես է իմ աշխատանքի բնույթը: Ու մի տեսակ հարմարվել եմ: Տեսուչները՝ նույնպես: Այնպես որ, բաժնի աշխատողը, որպես կանոն, ռեժիմ չունի: Իսկ շրջանն էլ այնքան փոքր չէ: Ահա մի քանի խոսուն թվեր. 25 դպրոց ունենք (13-ը՝ միջնակարգ, 12-ը՝ հիմնական), 2010 աշակերտ, 246 դասարան-կոմպլեկտ, 520 ուսուցիչ, 264 այլ աշխատողներ... Ունենք նաև հինգ մանկապարտեզ, երկուսը՝ պետական (Ազդիտուն և Առաքելյուն՝ 30 և 28 երեխայի ընդգրկումով), երեքը ոչ պետական՝ Մեծ Թաղերում, Հարդուքում և Տողում, որոնցում երեխաների թիվը 145 (75, 45, 25) է: Առաջին դասարաններում սովորում է 192 երեխա: Եթե ինչատակե՞նք նաև տասնյակ խմբակները (25), արտադպրոցական հիմնարկները, պատկերը երկի ավելի պարզ կլինի: Զմռռանա՞նք ասել, որ այս երկմիշ, եռմիշ թվերի հետևում կանգնած են անթիվ-անհամար մարդիկ, մեծ ու փոքրեր, որոնցից ամեն մեկն իր նախասիրություններն ունի, բնավորության գծերը, իր հայացքները, հետաքրքրությունները, զարգացածու-

թյան աստիճանը: Սրանց հետ միևնույն տոնով խոսել չի կարելի: Անգամ նախարարության ընդունած այս կամ այն որոշմանը կամ, ասենք, ծրագրին, գրքին տարբեր կոլեկտիվներում մոտեցումը տարբեր պիտի լինի: Տակտ է պահանջվում, նրբանկատություն, հոգածություն, պահանջվողություն: Թե ինչքան խնդիրներ կան՝ կապված ջեռուցման համակարգի, դասագրքերի, գրենական այլ պիտույքների, օլիմպիադաների, մարզական միջոցառումների հետ՝ դժվարանում են ասել:

Բայց ձեռքներս ծալած չենք նստում: Ուսումնական տարին դեռ նոր ենք սկսել, և մեր տեսուչները՝ Սոֆան, Մարինան (գլխավոր), Բորիսը, Սուսանը (առաջատար մասնագետներ) արդեն հասցրել են ստուգել լեռնային հեռավոր գյուղերից մեկի՝ հստաբերդի դպրոցը: Հերթական այցը կլինի Մեծ Թաղեր:

- Ո՞րն եք համարում ամենամեծ ձեռքբերումը, և ի՞նչն է Ձեզ ամենից շատ մտահոգում,- հարցնում եմ:

- Ձեռքբերումներ կան: Գոհունակությամբ կարող եմ ասել, որ բաժինը ուշադրություն է դարձնում ուսուցիչների վերապատրաստմանը, ինքնակրթությանը, փոխադարձ դասալուսմանը, նախապատրաստական խմբերում (Հարդուք, Տունի, Դրախտիկ) տարվող աշխատանքներին, մարզական մրցումներին (վոլեյբոլի, ֆուտբոլի, շախմատի մեր թիմերը միշտ էլ տեղ են գրավում՝ մասնակցում հանրապետական փուլին, արժանանում պատվոգրերի, դրամական պարգևի, գովասանագրերի): Մեծ Թաղերի թիմն այս տարի նվաճել է ԼԳՀ Աժ գավաթը: Ուսուցիչների վերապատրաստման, դպրոցական շենքերի հիմնանորոգման, ջեռուցման խնդիրները, մտավոր թույլ երեխաների հետ տարվող աշխատանքները բաժինը միշտ պահում է ուշադրության կենտրոնում:

Այս պահի դրությամբ շրջանի երկու գյուղերում (Ազդի, Ուխտաձոր) կառուցվում են դպրոցական տիպային շենքեր: Այս օրերին մեզ լրջորեն մտահոգում է ջեռուցման հարցը: Հարդուքի, Դրախտիկի, Տողի, Հակակվի, Արևշատի, Քուրաթաղի, Ա-

ռաջամուղի դպրոցները տաքացվում են կենտրոնացված ջեռուցման կարգով, մյուսները՝ վառելափայտով: Ժամանակին հոգացել ու, թվում է, փակուղու առաջ չենք կանգնի: Կան լուծման կարոտ խնդիրներ: Փոքր գյուղերում բոլոր առարկաները չէ, որ դասավանդում են համապատասխան կրթությամբ մասնագետները: Մտահոգիչ է օտար լեզվի ուսուցիչների պակասը: Բայց հիմքեր, նախադրյալներ կան հայտարարելու, որ առաջիկա երկու-երեք տարիներին վարչակազմի ղեկավար Վ. Պետրոսյանի անմիջական աջակցությամբ մշտա խնդիրները կլուծվեն, և արդյունքում, բնական է, նկատելիորեն կփոխվի դպրոցի դեմքը:

Այսպես է դատում բաժնի վարիչը, որը միշտ որոնումների, պրպտումների մեջ է:

- Նպատակ ունենք նյութերին մրցույթ անցկացնել ու երևան հանել, խրախուսել երգելու, պարելու, ստեղծագործելու շնորհքով օժտված ուսուցիչներին,- ասում է:- Նախատեսել ենք վերևի ենթաշրջանում մաթեմատիկայից բաց դաս կազմակերպել ու մասնակից անել մոտակա գյուղերի բոլոր մասնագետներին:

Ու էլի ծրագրե՛ր, անելիքներ... Ու էլի խոհե՛ր, մտորումներ... Այսպիսին է մեր բաժնի վարիչը՝ համակարգում բարի անուն ու համբավ ձեռք բերած Է. Պետրոսյանը, ով մի քանի տարի առաջ բարեխիղճ ու նվիրված աշխատանքի համար պարգևատրվել է «Արիության համար» և «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով: Իսկ բոլորովին վերջերս ԼԳՀ նախագահի հրամանագրով արժանացել է ԼԳՀ վաստակավոր մանկավարժի բարձր կոչման:

Սրանից էլ բարձր գնահատական...

Ասելիքն իմ ուզում եմ ավարտել Մեծ Լռեցու իմաստուն խոսքերով. «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կամ կարելի լինի համեմատել Մարդ կոչման հետ»:

Միջայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ
Գ. Մեծ Թաղեր

ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ԱՅՅ

Հրավերը՝ հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի օրը, բարեկամական այցով լինել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջուլբաթ գյուղում, մեծ ուրախություն առաջացրեց մեր՝ Բերդաշենի Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Հոկտեմբերի 4-ին դպրոցում Ուսուցչի օրվան նվիրված միջոցառման ավարտից հետո ավագ դպրոցի տարբեր դասարանների տասն աշակերտների և ուսուցիչների հետ ճանապարհվեցինք:

Առավոտյան Գեղամա լեռների արևածագը դիմավորելուց և շրջակա բարձրություններով հմայվելուց հետո մտանք գյուղ: Հ. 1 միջնակարգ դպրոցը կրկին հյուրընկալ դիմավորեց մեզ (2010թ. մայիսին և սեպտեմբերին փոխադարձ այցեր էինք կազմակերպել Ջուլբաթի և Բերդաշենի միջնակարգ դպրոցների ուսուց-

չական կոլեկտիվների միջև, իսկ 2011թ. Տաթևի վանքում միասին նշել ՀՀ անկախության 20-ամյակը), բարեմաղթանքի խոսքեր, նոր ծանոթություններ: Աշակերտները ծանոթացան իրենց հասակակիցների հետ:

Դպրոցում 12-րդ դասարանում կազմակերպվել էր բաց դաս գրականությունից, թեման՝ «Հովի. Շիրազ»: Համագործակցային մեթոդով անցկացված դասն ուսանելի էր: Նորից վայելեցինք Շիրազի անկրկնելի պոեզիան. նրա բանաստեղծությունների տեքստերով գրված երգերի կատարումները հիացրին ներկայից: Դասին իրենց ասումներով մասնակցեցին մեր դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները: Դասեր լսեցինք պատմությունից, քիմիայից, մայրենիից:

Ուսուցչի օրվան նվիրված միջոցառումը,

աշակերտների ասումները, երգը, ազգագրական պարերը գերեցին բոլորին: Պարերի արհեստավարժ կատարումը և շատ աշակերտների մասնակցությունը մեզ մոտ ափսոսանքի զգացում արթնացրին, որ մենք ծանոթ չենք հայկական պարարվեստին և շատ կցանկանայինք ունենալ պարուսույց, որը պարել կսովորեցնեք մեր աշակերտներին:

Կազմակերպվեցին այցելություններ տեսարժան վայրեր, եղանք նորաբաց եկեղեցուն: Մենք հրաժեշտ տվեցինք հյուրընկալ զուլաքարցիներին, հրավիրեցինք նրանց մայիսի 9-ին մեզ մոտ՝ Բերդաշեն: Սևանի գեղատեսիլ ափերով, զմայլվելով լճի գեղեցկությամբ, մեկնեցինք Ծաղկածոր, հիացանք Թեղեմիսի աշնանային գույներով ու շարունակեցինք ճանապարհը դեպի Երևան: Մեր էքս-

կուրսիայի ամենատպալորիչ մասը Մատենադարան այցելելն էր:

Մեծ բավականություն ստացած՝ հարուստ տպավորություններով վերադարձանք Արցախ:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանին, ԼԳՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռ. Իսրայելյանին՝ ճանապարհորդությանն օժանդակելու համար:

Ալենա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Մարտունու շրջանի Բերդաշենի
Մ. Մելքոնյանի անվան
միջն. դպրոց

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԵՈՆԱՐԴՈ ՊԻԶԱՆՈ (ՖԻԲՈՆԱԶԻ)

(սկիզբը նախորդ համարում)

2. Ֆիբոնաչիի թվեր

Ֆիբոնաչիի հաջորդականությունը լավ հայտնի էր հին Հնդկաստանում, շատ ավելի վաղ, քան այն հայտնի դարձավ Եվրոպայում: Արևմուտքում այդ հաջորդականությունը հետազոտվել է Ֆիբոնաչիի կողմից՝ իր «Պիրք արաբիկ մասին» գրքում:

Ֆիբոնաչիի խնդիրը: Ֆիբոնաչին դիտարկում է ճագարների իդեալական (կենսաբանորեն՝ ոչ իրական) պոպուլյացիան, ենթադրելով, որ՝

- ա) գոյական ամսում կար մեկ զույգ ճագար՝ էգ և արու (1 նոր զույգ)
- բ) առաջին ամսում առաջին զույգը տալիս է նոր զույգ (1 նոր զույգ)
- գ) երկրորդ ամսում երկու զույգերը տալիս են այլ զույգեր, և առաջին զույգը մահանում է (2 նոր զույգ)
- դ) երրորդ ամսում երկրորդ զույգը և երկու նոր զույգերը միասին տալիս են երեք նոր զույգ, իսկ հին երկրորդ զույգը մահանում է (3 նոր զույգ):

Օրինաչափությունը կայանում է նրանում, որ ճագարների յուրաքանչյուր զույգ իր կյանքի ընթացքում տալիս է երկու զույգ, իսկ ինքը մահանում է: Մեկ տարի հետո «տեր» և «տիկին» ճագարները կունենան 144 զույգ, իսկ 100 ամիս անց՝ 354 224 848 179 915 075 զույգ ճագար:

Աղյուսակ 1

Ամսվա սկիզբը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Հասուն զույգեր	1	1	2	3	5	8	13	21	34	55	89	144	233
Բոլոր զույգերի բանակը	1	2	3	5	8	13	21	34	55	89	144	233	377

Ֆրանսիացի մաթեմատիկոս Է. Լյուկի թեթև ձեռքով աղյուսակի երկրորդ շարքի թվերը անվանվեցին Ֆիբոնաչիի թվեր:

0, 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144, ... (1)

Թվային հաջորդականության տարրերն անվանում են Ֆիբոնաչիի թվեր՝ ի պատիվ միջնադարյան մեծ մաթեմատիկոս Լեոնարդո Պիզանոյի՝ Ֆիբոնաչիի: Այս հաջորդականության յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանում յուրաքանչյուր թիվ հավասար է նախորդ երկու թվերի գումարին: Երբեմն գրոն չի դիտարկվում որպես հաջորդականության անդամ: Ֆիբոնաչիի {F_n} թվային հաջորդականությունը տրվում է գծային անդրադարձ (ռեկուրենտ) բանաձևով

F_n = F_{n-2} + F_{n-1}, n ≥ 2, (2)

ընդունելով F_0 = 0, F_1 = 1:

Երբեմն Ֆիբոնաչիի թվերը դիտարկում են նաև բացասական n-ի համար՝ որպես երկդմանի անվերջ հաջորդականություն:

Աղյուսակ 2

n	-10	-9	-8	-7	-6	-5	-4	-3	-2	-1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
F_n	-55	34	-21	13	-8	5	-3	2	-1	1	0	1	1	2	3	5	8	13	21	34	55

Ընդ որում, բացասական ինդեքսով անդամները հեշտությամբ կարելի է ստանալ համարժեք բանաձևով

F_n = F_{-n+2} - F_{-n+1}

Հեշտ է նկատել, որ F_{-n} = (-1)^{n+1} F_n:

(2) բանաձևը հնարավորություն է տալիս ստանալու Ֆիբոնաչիի թվերի շատ հատկություններ: Առանց ապացույցների բերենք մի շարք հատկություններ:

Հատկություն 1. Ֆիբոնաչիի հաջորդականության հարևան անդամները փոխադարձ պարզ են:

Հատկություն 2. Եթե F_n-ը d-ի վրա բաժանվող ամենափոքր թիվն է, ապա d-ին պատկի Ֆիբոնաչիի թվերը կրկնվում են n պարբերությամբ:

Հատկություն 3. Ֆիբոնաչիի երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը հավասար է նրանց ինդեքսների ամենամեծ ընդհանուր բաժանարարին հավասար ինդեքսով Ֆիբոնաչիի թվին, այսինքն՝ (F_n, F_m) = F_{(n,m)}:

Հետևանք 1. Եթե n ≠ 2, ապա F_n-ը բաժանվում է F_m-ի այն և միայն այն դեպքում, երբ n-ը բաժանվում է m-ի:


Հետևանք 2. F_m-ը կարող է լինել պարզ թիվ միայն պարզ m-երի համար (բացառությամբ m = 4): Օրինակ՝ F_{13} = 233 պարզ թիվ է, նրա ինդեքսը՝ 13-ը, ևս պարզ թիվ է: Հակադարձը ճիշտ չէ: Օրինակ՝ F_{19} = 4181 = 37 · 113:

Հատկություն 4. N բնական թիվը հանդիսանում է Ֆիբոնաչիի թիվ այն և միայն այն դեպքում, երբ 5N^2 + 4 կամ 5N^2 - 4 թիվը հանդիսանում է որևէ թվի քառակուսի:

Հատկություն 5. Ֆիբոնաչիի թվերի մեջ ճշգրիտ քառակուսի են հանդիսանում միայն 0, 1, 2 և 12 ինդեքսով թվերը

F_0^2 = 0^2 = 0, F_1^2 = 1^2 = 1, F_2^2 = 1^2 = 1, F_{12}^2 = 12^2 = 144

Հատկություն 6. Պասկալի եռանկյան մեջ երկանդամների վերլուծության գործակիցների գումարներն անկունագծով հանդիսանում են Ֆիբոնաչիի թվեր (նկ. 1):



Նկ.1. Պասկալի եռանկյունի

Հատկություն 7. Ցանկացած N բնական թիվ միարժեքորեն ներկայացվում է

N = a_n F_n + a_{n-1} F_{n-1} + ... + a_2 F_2 + a_1 F_1

տեսքով, որտեղ a_x գործակիցները հավասար են զրոյի կամ մեկի: Օրինակ՝

20 = 13 + 5 + 2 = F_7 + F_5 + F_3
50 = 34 + 13 + 3 = F_9 + F_7 + F_4

Հատկություն 8. Առնչություններ (նույնություններ) Ֆիբոնաչիի թվերի միջև

F_1^2 + F_2^2 + ... + F_n^2 = F_n · F_{n+1}

F_1^2 + F_3^2 + ... + F_{2n-1}^2 = F_{2n}^2
F_2^2 + F_4^2 + ... + F_{2n}^2 = F_{2n+1}^2 - 1

F_{2n}^2 = F_{n+1}^2 - F_{n-1}^2
F_n^2 + F_{n+1}^2 = F_{2n+1}

Հատկություն 9. Հնարավոր չէ կառուցել եռանկյունի, որի կողմերը հանդիսանան Ֆիբոնաչիի թվեր:

Բինեթի բանաձևը: Իսկ կարելի է F_n-ը անմիջապես արտահայտել n-ի միջոցով: Պարզվում է՝ այդ բանաձևը ստացել է ֆրանսիացի մաթեմատիկոս Բինեթ:

Բինեթի բանաձևը F_n-ի արժեքը արտահայտում է որպես n-ի բացահայտ ֆունկցիա.

F_n = 1/sqrt(5) * [((1+sqrt(5))/2)^n - ((1-sqrt(5))/2)^n] = (phi^n - (-phi)^n) / (phi - (-phi)) = (phi^n - (-phi)^n) / (2*phi - 1)

որտեղ phi = (1+sqrt(5))/2 ≈ 1,618 անվանում են «ոսկե հատում» (այդ մասին կարդացեք ստորև): Ընդ որում phi-ն և (-phi)^-1 = 1 - phi հանդիսանում են

x^2 - x - 1 = 0 (3)

բնութագրիչ հավասարման արմատներ: Նշենք, որ 1/phi = (sqrt(5)-1)/2 ≈ 0,618:

Բինեթի բանաձևից հետևում է, որ բոլոր n ≥ 0 արժեքների համար F_n-ը phi^n/sqrt(5)-ին

ամենամոտ ամբողջ թիվն է, այսինքն F_n-ը հավասար է phi^n/sqrt(5)-ի ամբողջ մասին՝ F_n = [phi^n/sqrt(5)]:

Հատկություն 10. Եթե վերցնենք Ֆիբոնաչիի շարքի որևէ երկու հաջորդական անդամներ և բաժանենք մեծ թիվը փոքրի վրա, ապա արդյունքը (բանորոշ) կմոտենա ոսկե հատմանը: Ընդ որում, F_{n+1}-ի և F_n-ի հարաբերության սահմանը, երբ n-ը ձգտում է անվերջության, հավասար է phi-ի,

այսինքն՝ lim_{n->infty} F_{n+1}/F_n = phi:

(շարունակելի)

ՃԱՎԱԽ Է, ԲԱՅՑ ՓԱՍՏ

21-րդ դարը համարվում է նորագույն տեխնոլոգիաների, նորանոր հնարավորությունների և համաճարեղ մտահղացումների դար: Բայց մի՞թե այդ դարում ծիծաղելի չէ խոսել անգամ նրա չնչին մասը կազմող համակարգչի բացակայության մասին մեր իրականության մեջ: Ինչպե՞ս խոսել բազում հայտնագործությունների, արդի տեղեկատվական հնարավորությունների մասին, որոնք այսօր կիրառելի և հասանելի են ամբողջ աշխարհին, բայց՝ ոչ մեզ:

Շատերը չեն հասկանա իմ մտահոգությունը, որովհետև այն ամենը, ինչի մասին խոսում ենք, այժմ նյուսների համար արդեն առօրյայի և դասապրոցեսի անբաժանելի մաս է դարձել:

Հավանաբար, հարցս տարօրինակ թվաբոլոր նրանց, ովքեր տարիներ շարունակ դասավանդում են նման պայմաններում: Չէ՞ որ միշտ էլ դասավանդել են առանց համակարգչի ու համացանցի՝ ձեռքի տակ ունենալով միայն դասագիրք և էլի որոշ լրացուցիչ գրականություն ու, փորձելով ձեռք բերել այնպիսի պարագաներ, որոնք ավելի հետաքրքիր կդարձնեն դասը և մատչելի՝ հաղորդվող նյութը: Բայց մի՞թե հիմա երեխաներին կզարմացնեն գունավոր թղթերով պատրաստված ինքնաշեն առարկաներով կամ էլ՝ գունավոր կալիգրաֆերով: Մեր՝ ուսուցիչներիս խնդիրը բարդանում է, իսկ աշակերտների հետաքրքրությունը դասերի նկատմամբ՝ նվազում:

Կրթական բարեփոխումների արդյունքում նախապատվությունը տրվում է աշակերտներ-

ի ինքնուրույն և անհատական աշխատանքին: Նրանց մտավոր և ստեղծագործական աշխատանքի ընթացքում ուսուցիչը պետք է համղես զա ավելի շատ ուղղորդողի դերում: Անհրաժեշտ է դասը կազմակերպել ժամանակակից պայմաններին համապատասխան: Այսինքն՝ դասի ընթացքում պետք է երևան աշակերտների կատարած աշխատանքները, որոնք, ի դեպ, միայն տանը հանձնարարվող գրքային առաջադրանքներով չպետք է սահմանափակվեն: Ստեղծագործելու և մտածողությունը զարգացնելու համար բավական չէ սահմանափակվել միայն դասի ընթացքում սովորած նոր հասկացություններով և ուսուցչի հանձնարարություններով: Անհրաժեշտ է ինքնուրույն փնտրել, գտնել, հետաքրքրվել, և միայն այդ դեպքում կարելի է հասնել հաջողության: Երբ փնտրելու, նորն իմանալու հնարավորություն չկա, անգամ ամենահետաքրքրասեր երեխայի մոտ կորչում է ավելի իմանալու ցանկությունը: Անհրաժեշտ ինֆորմացիան գտնելու համար կարելի է օգտվել հազեցած գրադարաններից, ավելի մատչելի և արդիական՝ համացանցից: Սակայն... Կարծում են, մեր պարագայում մնում է միայն ապավինենք ավանդական ուսուցչակենտրոն դասավանդմանը: Բայց մինչև ե՞րբ...

Արմինե ՀԱՍԱՆՅԱՆ
Հաղորդիչի շրջանի Զուրաբաղի Գ. Գասպարյանի անվ. հիմն. դպրոցի մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչուհի

ՀՈՐԵԼՅԱՆ

ՆԱԳՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Ծննդյան 100-ամյակի կապակցությամբ)

2012թ. նոյեմբերի 23-ին լրանում է մեխանիկայի հայկական գիտական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ ակադեմիկոս, վաստակաշատ գիտնական, հանրապետությունում գիտության և բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչ, հայտնի պետական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նագուշ Խաչատուրի Հարությունյանի ծննդյան 100-ամյակը:

Հոկտեմբերի 8-12-ը Ծաղկածորում տեղի ունեցավ «Հոծ միջավայրերի մեխանիկայի արդի պրոբլեմները» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ն.Խ. Հարությունյանի ծննդյան 100-ամյակին: Այն կազմակերպվել էր Հայաստանի կրթության և գիտության նախարարության, Հայաստանի տեսական և կիրառական մեխանիկայի կոմիտեի, Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի, ՌԳԱ ղեկավարման կոմիտեի մարմնի մեխանիկայի գիտական խորհրդի, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի, ՌԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի, ԵՊՀ-ի, ԵՊՃՀ-ի և ԵՊՃՀ-ի կողմից:

Գիտաժողովի համանախագահներն էին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ս. Համբարձումյանը, ՌԳԱ ակադեմիկոս Ն.Ֆ. Մորոզովը, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա.Ս. Մխիթարյանը, Ֆ.մ.գ.դ. Ա.Վ. Մանժիրովը, Ֆ.մ.գ.դ. Վ.Ն. Հակոբյանը:

Գիտաժողովին մասնակցում էին ավելի քան 120 գիտնականներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Գերմանիայից, Լեհաստանից, Վրաստանից, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունից, Հայաստանից ու Արցախից: Հատկապես ներկայացուցչական էին Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների կազմերը: Գիտաժողովին հրավիրվել էր ակադեմիկոս Ն.Խ. Հարությունյանի դուստրը՝ Իրինա Հարությունյանը՝ ամուսնու հետ:

Հանդիսավոր բացումից հետո տեղի ունեցավ գիտաժողովի լիագումար նիստը, որտեղ զեկուցումով հանդես եկան ակադեմիկոս Ն.Խ. Հարությունյանի աշակերտներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Ս. Մխիթարյանը՝ «Ն.Խ. Հարությունյանի ժառանգության ու նրա հետազոտությունների զարգացման մասին» թեմայով և Ֆ.մ.գ.դ. Ա.Վ. Մանժիրովը՝ «Ն.Խ.Հարությունյանի գաղափարների զարգացումը ժամանակակից մեխանիկայում» թեմայով: Այնուհետև գիտաժողովը շարունակեց իր աշխատանքները երեք բաժանմունքներում:

Հոկտեմբերի 10-ին գիտաժողովի մասնակիցները մասնակցեցին հուշատախտակի հանդիսավոր բացմանը, որը տեղի ունեցավ Երևանի Մաշտոցի պողոտայի թիվ 9 տանը, որտեղ իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել անվանի գիտնականն ու քաղաքական գործիչը:

Ն.Խ. Հարությունյանի անվան հետ են կապված ղեկավարման կոմիտեի մեխանիկայի մի շարք գիտական ուղղությունների ձևավորումն ու հետագա զարգացումը, մեխանիկ գիտնականների ձևավորման գրեթե քառասունամյա գործընթացը Հայաստանում և նրանից դուրս, մեխանիկայի զարգացման մի ամբողջ շրջան ընդհանրապես: Նա իրավամբ համարվում է Հայաստանում սողքի տեսության առաջնորդը, սողքի ժամանակակից տեսության հիմնադիրներից մեկը, հանրապետությունում ղեկավարող կինո մարմնի մե-

խանիկայի, մասնավորապես, առաձգականության մաթեմատիկական տեսության կոնստրուկտի և խառը եզրային խնդիրների գիտական ուղղության հիմնադիրը:

Ն.Խ. Հարությունյանը ծնվել է 1912թ., Երևանում: Երկար տարիներ նա ապրել է իր պապի՝ հայտնի պատմաբան Լեոյի հետ, որի վիթխարի գիտական պատկերը պատանու մոտ ներշնչել է հարգանք գիտության և կրթության հանդեպ, դաստիարակել աշխատասիրություն: 1930թ. Ն.Խ. Հարությունյանն ընդունվում է ԽՍՀՄ հեղինակավոր բուհերից մեկը՝ Մոսկվայի Վ. Կույբիշևի անվան ռազմա-ճարտարագիտական ակադեմիան: Ավարտելով այն 1936թ. և ստանալով հիդրոշինարար-ճարտարագետի մասնագիտություն՝ նա վերադառնում է Հայաստան և աշխատանքի անցնում «Երևան-Չանգուշին» վարչությունում՝ որպես առաջատար ճարտարագետ, միաժամանակ դասավանդում Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1937թ. Ն.Խ. Հարությունյանն ընդունվում է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրան: Մեծագույն մեխանիկ գիտնականներ Բ.Գ. Գալյուկինի, Ե.Լ. Նիկոլայի, Ա.Ի. Լուրյեի հետ շփումը վճռական դեր խաղաց նրա հետագա գիտական ճակատագրում և ձևավորեց նրա գիտական հավատամքը: Ն.Խ. Հարությունյանը մեծ սեր ու հարգանք էր տածում Լենինգրադի մեխանիկայի դպրոցի նկատմամբ, նրա գիտական կապերը նրանց հետ երբեք չընդհատվեցին:

1941թ. պաշտպանելով թեկնածուականատեմախոսություն՝ նա մեկնեց ռազմա-կատ: Մարտական վաստակի համար նա արժանացել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշանների, Կարմիր աստղի շքանշանի և մի շարք մեդալների:

1945թ.՝ բանակից զորացրվելուց հետո, Ն.Խ. Հարությունյանը վերադառնում է Հայաստան և եռամսհուն կերպով վերսկսում գիտական և գիտամանկավարժական գործունեությունը:

1949թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում փայլուն պաշտպանում է ատեմախոսություն և ստանում տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1950թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Նույն տարում նա ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և նախագահության անդամ:

1952-55թթ. շարունակվում է Ն.Խ. Հարությունյանի գիտական և կազմակերպչական բեղմնավոր գործունեությունը Գիտությունների ակադեմիայում, որտեղ նա աշխատում է «Տեխնիկական գիտությունների բաժնի» ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում: 1955թ. Ն.Խ. Հարությունյանը նշանակվում է մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում նորաստեղծ սողքի և ամրության լաբորատորիայի վարիչ: 1959թ. նա ընտրվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի փոխնախագահ:

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքներին զուգընթաց նա զբաղված էր բեղմնավոր գիտամանկավարժական գործունեությամբ: 1945-51թթ. նա դասավանդում էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 1951թ. սկսած՝ Երևանի պետական

համալսարանում, որտեղ զբաղեցնում էր տեսական մեխանիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոն, իսկ 1958թ. գլխավորում էր իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված առաձգականության և պլաստիկության տեսության ամբիոնը, որը ղեկավարեց մինչև 1978 թվականը:

1961թ. Ն.Խ. Հարությունյանը նշանակվում է ԵՊՀ ռեկտոր: Նրա ջանքերով համալսարանում հիմնվում են բիոֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոններ, ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը:

1962թ. Ն.Խ. Հարությունյանին շնորհվում է Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչում: Երկար տարիներ նա եղել է ԽՍՀՄ տեսական և կիրառական մեխանիկայի կոմիտեի և նրա նախագահության անդամ, ՀԽՍՀ ԳԱ «Մեխանիկա» տեղեկագրի խմբագիր, ԽՍՀՄ ԳԱ «Պինդ մարմնի մեխանիկա» տեղեկագրի խմբագրի անդամ:

Ն.Խ. Հարությունյանը ակտիվորեն զբաղվում էր հասարակական-քաղաքական և պետական գործունեությամբ: Բազմիցս ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, 1962-1975թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ:

Ն.Խ. Հարությունյանի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում զարգանում էին երկու ուղղությամբ՝ առաձգականության մաթեմատիկական տեսություն և սողքի տեսություն:

Ն.Խ. Հարությունյանը գիտական մեծ ներդրում է ունեցել ղեկավարման կոմիտեի մարմնի մեխանիկայի կարևոր բաժնիներից մեկում՝ սողքի տեսության մեջ: Մշակելով և վերլուծելով բազմաթիվ փորձերի արդյունքները՝ Ն.Խ. Հարությունյանը և Գ.Ն. Մասլովը եկան այն եզրահանգման, որ բետոնից, պլաստմասսաներից, գրունտներից, ապակեպլաստներից պատրաստված ճարտարագիտական կառույցների ամրության և երկարակյան հարցում բացի նյութի սովորական ֆիզիկամեխանիկական հատկություններից անհրաժեշտ է հաշվի առնել նաև սողքով՝ որպես ծերացում և ժառանգություն, պայմանավորված հատկությունները: Այս հիմնարար գաղափարն ընկավ Ն.Խ. Հարությունյանի կողմից մշակված ծերացող մարմնիների սողքի մաթեմատիկական նոր տեսության հիմքում, որը հետագայում գիտության մեջ մտավ որպես սողքի Մասլով-Հարությունյանի տեսություն: Սողքի տեսության բնագավառում առաջնային արդյունքներն ընդհանրացվեցին և 1952թ. Մոսկվայում հրատարակվեցին Ն.Խ. Հարությունյանի «Սողքի տեսության որոշ հարցեր» մենագրության մեջ, որն առաջիններից մեկն է ԽՍՀՄ-ում և աշխարհում: Այն թարգմանվել է հրատարակվել է Անգլիայում, Ֆրանսիայում, Չինաստանում, իսկ առաջին գլուխները՝ Գերմանիայում, Լեհաստանում և Ռումինիայում:

1975թ. Ն.Խ. Հարությունյանը տեղափոխվում է Մոսկվա և աշխատանքի անցնում ԽՍՀՄ ԳԱ Մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտում՝ որպես «Առաձգամածուցիկ մարմնների մեխանիկա» բաժնի վարիչ: Մոսկվա-



յուն բնակվելու տարիներին նա երբեք չթուլացրեց իր գիտական և անձնական կապերը Հայաստանի հետ: Նա միաժամանակ ղեկավարում էր ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի առաձգամածուցիկության տեսության բաժինը:

Ն.Խ. Հարությունյանը, լինելով հանրապետությունում գիտության և բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչներից մեկը, մեծ ներդրում ունի երիտասարդ գիտնականների և մասնագետների ձևավորման և պատրաստման գործում: Նա ղեկավարում էր բազմաթիվ երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների աշխատանքը, ստեղծել էր իր յուրօրինակ գիտական դպրոցը՝ արժանանալով բազմաթիվ աշակերտների և հետևորդների խորին հարգանքին: Մոսկվայում աշխատելու տարիներին նույնպես ուներ մեծաթիվ աշակերտներ և գիտական հետևորդներ Մոսկվայից, Միության տարբեր հանրապետություններից: Ն.Խ. Հարությունյանը լայնորեն հայտնի էր և մեծ հեղինակություն էր վայելում Մոսկվայից Միության և արտասահմանյան երկրների գիտնականների շրջանում:

Նշանավոր գիտնական իր ժամանակի բարեկիրթ մարդկանցից մեկն էր, ստեղծագործող մտավորականության վառ ներկայացուցիչներից մեկը:

Ն.Խ. Հարությունյանը մահացավ 1993թ. հունվարի 18-ին, Մոսկվայում՝ մինչև իր կյանքի վերջը նվիրված մնալով գիտությանը: Նա թողել է գիտական մեծ ժառանգություն՝ յոթ հիմնարար մենագրություն, շուրջ երկու հարյուր ինքնատիպ գիտական աշխատանքներ, գիտական դպրոց, մեծաթիվ աշակերտներ ու հետևորդներ Հայաստանում, ԱՊՀ երկրներում և արտերկրում:

Ն.Խ. Հարությունյանի աշխատությունները մեկընդմիջտ մտել են մեխանիկայի համաշխարհային գիտության գանձարանը: Ականավոր ու վաստակաշատ գիտնականի, ազնիվ մտավորականի կերպարը միշտ կոզևորի գիտական հասարակության ներկայացուցիչներին՝ գիտական նոր նվաճումների հասնելու ճանապարհին:

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ԿԱՐԳ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
պետական գրանցման համարը 10512134
գրանցման տարեթիվը 31 հոկտեմբերի 2012թ.
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հոկտեմբերի 2012թ.

N_181/Ն

ք. Ստեփանակերտ

ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 159-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասին և «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «էքստեռն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2008 թվականի ապրիլի 26-ի N 58-Ս հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 159-Ն հրամանը:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայեյանին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայեյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԱՍԹՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2012թ. հոկտեմբերի 23-ի N 181/Ն հրամանի

ԿԱՐԳ
ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցի՝ անկախ ենթակայությունից և կազմակերպարարական ձևից, (այսուհետ՝ դպրոց) սովորողի համար դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական քննություններ, ինչպես նաև հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ (այսուհետ՝ էքստեռն) կազմակերպելու հետ կապված իրավահարաբերությունները:

II ԷՔՍՏԵՌՆ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանրակրթական դպրոցի սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ (հանրակրթական ծրագրի յուրացման նորմատիվ ժամկետների փոփոխություն)

կազմակերպվում են՝ ելնելով սովորողի կողմից հանրակրթական ծրագրերի յուրացման մակարդակից:

3. էքստեռն փոխադրական քննություններ կազմակերպվում են դպրոցների 1-8-րդ դասարանների բացառապես այն սովորողների համար, ովքեր նախորդ (բացառությամբ 1-ին դասարանի) դասարանի տարեկան, տվյալ դասարանի ընթացիկ և առաջին կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից ունեցել են գերազանց առաջադիմություն (տարեկանում՝ 9 կամ 10 միավոր, քննական՝ 10 բալային համակարգում 9 կամ 10 միավոր, իսկ 20 բալային համակարգում՝ 18, 19 կամ 20 միավոր), հիմնական կրթության գերազանցության վկայական, ինչպես նաև՝ 10-րդ դասարանների փոխադրական քննություններից գնահատվել են 9 կամ 10 միավոր՝ պահպանելով սույն կարգի 7-րդ կետի պահանջները:

4. «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը չի

կարող արգելք հանդիսանալ էքստեռն կարգով քննություններ հանձնելուն:

5. Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում դպրոցի սովորողը դասարանից դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

6. Առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող դպրոցի ավարտական դասարանների սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ չեն կազմակերպվում:

7. Միջազգային օլիմպիադաներում (առարկայական, սպորտային), մրցաշարերում, առաջնություններում, փառատոներում մասնակցություն ունենալու դեպքում երրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի սովորողների համար, նրանց ցանկության դեպքում, կազմակերպվում են էքստեռն փոխադրական քննություններ՝ պահպանելով սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները:

8. Սովորողի համար էքստեռն փոխադրա-

կան քննությունները կազմակերպվում են հետևյալ ընթացակարգով.

1) մինչև տվյալ ուսումնական տարվա հունվարի 10-ը սովորողի ծնողը, դասուցիչը և առնվազն 3 դասավանդող ուսուցիչներ համատեղ գրավոր դիմում են ներկայացնում դպրոցի տնօրենին՝ սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու առաջարկով, որը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկվում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում,

2) սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների ապահովման դեպքում մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում թույլատրել սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրման քննություններին մասնակցելու մասին,

3) դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի որոշումը և սովորողի առաջադիմության վերաբերյալ փաստաթղթերը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այ-

ԿԱՐԳ

սուղետ՝ Նախարարություն):

9. Մանկավարժական խորհրդի կողմից դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրման երաշխավորված սովորողը՝ անկախ դպրոցի ենթակայությունից և կազմակերպիչի անկախ ձևով, Ստեփանակերտ քաղաքում կենտրոնացված կարգով հանձնում է փոխադրական քննություններ:

1) 1-6-րդ դասարաններում՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա», 7-8-րդ դասարաններում՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն), իսկ 10-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, երկրաչափություն), «Հայոց պատմություն» առարկաներից:

2) Քննություններն անցկացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը նախագահում է Նախարարը կամ Նախարարի տեղակալը:

3) Փոխադրական քննություններն (գիտելիքների ստուգումը) անցկացվում են տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի և հաջորդ դասարանի 1-ին կիսամյակի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութի շրջանակներում:

4) Քննությունների թեստերը կազմվում են Նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից:

Թեստերը փակ ծրարով ներկայացվում են Նախարարություն՝ առնվազն 15-ական առաջադրանք՝ սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված առարկաներից՝ ըստ քննություններին ներկայացված հայտերի քանակի:

10. Քննություններն անցկացվում են Նախարարության կողմից ընտրված դպրոցում, Նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով՝ հունվարի 20-26-ն ընկած ժամանակահատվածում:

11. Կենտրոնացված փոխադրական քննություններն անցկացնող հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում սովորողն իրավունք է ստանում հանձնել տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված մնացած առարկաների քննությունները, որոնք անցկացվում են սովորողին երաշխավորած դպրոցում՝ դպրոցի տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից:

12. Սույն կարգի 11-րդ կետում նշված քննությունները կազմակերպվում են հունվարի 27-ից փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ առարկայական մեթոդական միավորումների կողմից կազմված քննական առաջադրանքներով:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված ժամանակահատվածում հանձնվող քննությունների ժամանակացույցը ներկայացվում է լիազոր մարմնին և Նախարարություն:

1) Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», բնագիտական առարկաներից և օտար լեզուներից քննություններն անցկացվում են գրավոր, իսկ մնացած առարկաների քննությունները՝ ըստ մանկավարժական խորհրդի որոշման:

2) Փոխադրական բոլոր քննություններից 10 բալային համակարգում 7-10 միավոր գնա-

հատվելու դեպքում դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու մասին:

14. Դպրոցում կազմակերպվող փոխադրական քննություններին կարող են մասնակցել Նախարարի լիազոր ներկայացուցիչը, շրջաններում՝ շրջվարչակազմերի, իսկ Ստեփանակերտում՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների ներկայացուցիչները:

15. Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա սովորողին հրամանով փոխադրում է հաջորդ դասարան և հնգօրյա ժամկետում տեղեկացնում Նախարարությանը և Լիազոր մարմնին:

16. Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների քննական գնահատականները համարվում են կիսամյակային և տարեկան գնահատականներ:

III ԷՔՍՏԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. էքստենս ավարտական քննությունները կազմակերպվում են կրթական 2-րդ և 3-րդ աստիճանների հանրակրթական հիմնական, ընդհանուր ծրագրերին համապատասխան:

18. էքստենս կարգով հիմնական կրթության վկայական ստանալու համար կարող է դիմել մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող) անձը (այսուհետ՝ դրսեկ):

19. էքստենս կարգով միջնակարգ կրթության ատեստատ կարող է ստանալ.

1) էքստենս կարգով հիմնական կրթության վկայական ստացած և 18 տարին լրացած դրսեկը՝ էքստենս կարգով հիմնական կրթության վկայական ստանալու տարվա՝ սույն կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված 3-րդ քննաշրջանից սկսած,

2) հիմնական կրթության վկայական ունեցող անձը, եթե վկայական ստանալու տարվանից անցել է 4 և ավելի տարի (տարիների հաշվարկը կատարվում է ուսումնական պարամունքների ավարտման օրվանից)՝ 23-րդ կետով սահմանված առաջին, երկրորդ և երրորդ քննաշրջաններում:

20. էքստենս ավարտական քննությունները կազմակերպվում են Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարության կողմից էքստենս ավարտական քննություններ կազմակերպելու իրավունք ստացած ավագ դպրոցում:

21. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դրսեկների համար էքստենս ավարտական քննություններ կազմակերպվում են Նախարարության կողմից ընտրված դպրոց (ներ) ում:

22. Ինքնակրթությամբ զբաղված անձը, ցանկության դեպքում, կարող է գրավոր դիմել որևէ ավագ դպրոց՝ քննական առարկաներից վճարովի հիմունքներով լրացուցիչ պարամունքներ կազմակերպելու խնդրանքով:

23. Հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստենս ավարտական քննությունները կազմակերպվում են 3 քննաշրջաններով.

1) 1-ին քննաշրջան՝ փետրվարի 15-ից

մարտի 15-ը ներառյալ՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

2) 2-րդ քննաշրջան՝ ավարտական և պետական ավարտական քննությունները՝ ըստ ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակացույցի, մյուս առարկաները՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

3) 3-րդ քննաշրջան՝ հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

24. Ավարտական փաստաթուղթ ստանալու համար դրսեկը կամ նրա օրինական ներկայացուցիչը դիմում է ներկայացնում սույն կարգի 20-րդ կետում նշված ավագ դպրոցի տնօրենին՝ յուրաքանչյուր քննաշրջանից 30 աշխատանքային օր առաջ:

25. Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) հիմնական կրթության վկայական ստանալու համար՝
ա. անձը հաստատող փաստաթուղթ,
բ. տեղեկանք նախնական կրթության մասին,

գ. սույն կարգի 35-րդ կետով նախատեսված տեղեկանքը (առկայության դեպքում):

2) միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար՝

ա. անձը հաստատող փաստաթուղթ,
բ. հիմնական կրթության վկայական (բնօրինակը),
գ. սույն կարգի 35-րդ կետով նախատեսված տեղեկանքը (առկայության դեպքում):

26. էքստենս ավարտական քննություններ հանձնող դրսեկը կամ նրա օրինական ներկայացուցիչը դիմումում նշում է, թե տվյալ քննաշրջանում քանի քննություն է ցանկանում հանձնել և որ առարկաներից (պահպանելով սույն կարգի 20-րդ կետի պահանջները):

27. Փաստաթղթերը ներկայացվում են մեկ անգամ՝ բոլոր քննաշրջանների համար:

28. Փաստաթղթերի ընդունումն ավարտվում է քննաշրջանը սկսվելուց 10 աշխատանքային օր առաջ:

29. էքստենս քննություններ կազմակերպող ավագ դպրոցը փոխվելու դեպքում փաստաթղթերի պատճենները փոխանցվում են նոր դպրոցի տնօրենին:

30. Փաստաթղթերի պատճենները փոխանցող ավագ դպրոցի տնօրենը պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին դրսեկին կամ նրա օրինական ներկայացուցիչին:

31. Սույն կարգի պահանջներին համապատասխանող էքստենս քննություններ հանձնել ցանկացողների փաստաթղթերը դպրոցի տնօրենը քննաշրջանը սկսվելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ ներկայացնում է Նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչություն՝ փաստաթղթերի ուսումնասիրության և սահմանված կարգին համապատասխան քննություններին թույլատրելու համար:

32. Գրավոր քննությունների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից և տրամադրվում են Նախարարությանը, բանավոր քննությունների առաջադրանքները՝ դպրոցի համապատասխան առարկայական մեթոդական միավորումների կողմից:

33. էքստենս քննություններ հանձնող դրսեկները քննական անբավարար գնահատա-

կաններ ստանալու դեպքում առաջադրանքներ չեն ստանում:

34. Սույն կարգի 23-րդ կետով սահմանված 2-րդ քննաշրջանի ընթացքում որևէ պատճառով քննություններին չներկայացած դրսեկը միասնական (ավարտական և պետական ավարտական) քննությունները հանձնում է ԳԹԿ-ի սահմանած օրերին:

1) 1-ին, 2-րդ կամ 3-րդ քննաշրջաններում որևէ պատճառով որևէ քննության չմասնակցած դրսեկը տվյալ քննությունը հանձնում է հաջորդ տարիներին՝ երեք քննաշրջանների ընթացքում:

35. էքստենս ավարտական քննություններ հանձնած դրսեկին սույն կարգի 20-րդ կետում նշված դպրոցի տնօրենը տրամադրում է տեղեկանք՝ գնահատման 10 միավորային համակարգում՝ 4-10, 20 միավորային համակարգում՝ 8-20 միավոր ստանալու վերաբերյալ:

36. Դրսեկի ստացած գնահատականները ուժի մեջ են մինչև հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալը:

37. Դրսեկը հաջորդ քննաշրջաններին քննություն է հանձնում միայն այն առարկաներից, որոնցից քննություն չի հանձնել կամ գնահատման 20 բալային համակարգում ստացել է 1-7, 10 միավորային համակարգում՝ 1-3 միավորներ:

38. Քննությունների հանձնաժողովները կազմում են էքստենս քննություններ անցկացնելու իրավունք ստացած դպրոց(ներ)ի տնօրեն(ներ)ը:

1) 9-րդ դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի երկու անդամ,

2) 12-րդ դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի երեք անդամ:

39. էքստենս կարգով քննությունների վերահսկողությունն իրականացնում է Նախարարությունը:

40. Բոլոր քննություններից գնահատման 10 միավորային համակարգում՝ 4-10, 20 միավորային համակարգում՝ 8-20 միավոր ստացած դրսեկներին սահմանված կարգով տրվում է հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ՝ «էքստենս» նշումով: Նշումը կատարում է Նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:

41. էքստենս ավարտողները զովասանագրով կամ մեդալով չեն պարգևատրվում:

42. էքստենս ավարտողներին տրված հիմնական կրթության վկայականը կամ միջնակարգ կրթության ատեստատը գրանցվում է դպրոց(ներ)ի հիմնական կրթության վկայականների կամ միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյաններում: Դպրոցի հիմնական շրջանավարտների մասին տվյալները լրացնելուց հետո հաջորդ տորի կենտրոնում գրվում է «էքստենս» բառը, և համարակալումը շարունակելով՝ լրացվում են սույն կարգով ավարտական վկայական ստացած դրսեկների մասին տվյալները:

43. էքստենս ավարտական քննությունների ամփոփագրերը և քննական գրավոր աշխատանքները պահվում են քննությունները կազմակերպող դպրոցում՝ դրսեկի՝ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալուց հետո՝ 1 տարի:

ԲԵՍԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐՅԱ ՍՈՒՐԲ ՀԱՅ

Հոկտեմբերի 19-ին Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցում անցկացվեց համաքաղաքային միջոցառում «Հանապազօրյա սուրբ հաց» խորագրով: Կազմակերպիչը 4-րդ «դ» դասարանի դասվար Լիանա Սարգսյանն էր: Ներկա էին ԿԳՆ ԿՊՏ տեսուչ Աննա Պետրոսյանը, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, բաժնի մասնագետներ, մայրաքաղաքի դպրոցների դասվարներ, հյուրեր:

Միջոցառումն առաջին հերթին մեր ազգային ոգու, հավատքի, արժանապատվության, պաշտամունքի դաս էր:

Ներկաները հիացած էին միջոցառմամբ և գոհունակություն ու շնորհակալություն հայտնեցին դպրոցի տնօրենությանն ու բեմագրի հեղինակին:

Ընդառաջելով դասվարների ցանկությանը՝ բեմագիրը տպագրում ենք մեր թերթում:

Միջոցառման նպատակը.

Ցորենի, հացի պատմությունը, առաջացումը, նշանակությունը ներկայացնելու միջոցով աշակերտների մեջ հացի նկատմամբ խնայողական վերաբերմունքի ձևավորում:

- ազգային հացի, ազգագրական հացաթխման պարագաների մասին ճանաչողական գիտելիքների ընդլայնում.

- հացի հանդեպ պատշաճ վերաբերմունքի դաստիարակում:

Դասիչի կահավորումը.

հացի մասին ասույթներով պատասխաններ, հացատեսակներ, ցորենի հասկի փնջեր, հացաթխման գործիքներ (գրտնակ, սեղան, թոնիկ, սաք, խմոր և այլն) մակարոնից վարագույր

Բեմի մի անկյունը ձևավորված է հասկերով (արտ), մի անկյունում դրված են հացատեսակներ, թոնիկը, վահանաձև սաքը, փոքրիկ սեղան, վրան՝ մաղ, գրտնակ և խմոր:

Մասնակիցները կրում են ազգային տարագ: Սև արքայի հագին պարսկական տարագ է: Հացանուշը զարդարված է լավաշի շերտերով:

Հյուրերին դիմավորել աղուհացով:

Արբերը խաչից են ծնվել, Ծիծաղը՝ լացից, Աշխարհը փուչ է, ավեր, Առանց աղուհացի:

Խորհրդավոր ընթրիքին (այն գիշեր, որ Հիսուսին մատնում էին) մեր փրկիչ Հիսուսը ձեռքն առավ հացը, շնորհակալություն հայտնեց, կտրեց այն ու ասաց. «Առե՛ք կերե՛ք, սա է Մարմինն իմ, որ ձեզ համար է տրվում: Սա արե՛ք իմ հիշատակի համար»:

Հա՛ց, դու ամենագոր, ես քեզ եմ դիմում որպես շնչավորի, որ դու միշտ լինես, հարատես, չվերջանաս, քանզի քո վերջանալը մեր անվերջանալի վիշտը կնշանակի:

Հացը ամենագորավորն է, առավել թանկագինը, առավել կենսատուն:

Ամեն ինչի առատությունը դեռ հաց չէ, բայց հացի առատությունը ամեն ինչ է:

Հացը մեր լինելիության անփոխարինելի որոշիչն է:

Հացը կյանք է, բարություն, ժպիտ, լույս:

Հացը մայր հողի հրաշալիքն է, բնության մեծագույն պարզը, մարդկային արարչագործության ամենագոր արարումը:

Հայ ժողովուրդը հացապակաս շատ տարիներ է ունեցել ու պահպանել է հացի հանդեպ ունեցած պաշտամունքը և ամենադժվարին ժամանակներում էլ հյուրին, բարեկամին դիմավորել է աղուհացով:

Դարեր շարունակ հացը մեծագույն սրբություն է եղել հայ ժողովրդի համար: Իզուր չէ, որ հացն իր հազարամյա ճանապարհին

մատների վրա հաշվվող երդումներից մեկն է դարձել «Ես հացը վկա» խոսքը:

(Նարարարի «Հորովել» երգը) Իրիքնակը տուս ա եկալ...

Վաղո՛ւց, շատ վաղուց Կյանքը մարդկանց համար Դժվար է եղել: Սոված մնացել, Բերք չեն աճեցրել, Ձգեստ չեն կարել, Թափառել են միշտ Անտառով, դաշտով, Լեռներով, սարով Եվ չեն հասկացել, Որ ժամանակը պետք է խնայել, Աշխատանքի մեջ պետք է այն վատնել:

Եվ ահա մի օր տխուր, գլխիկոր ման էին գալիս,

Երբ նրանց միջից մի փոքրիկ տղա Բերանը դրեց սերմի մի հատիկ: Եվ ճչաց տղան, կանչեց բոլորին: Համե՛ղ է, համե՛ղ, դուք էլ փորձեցե՛ք: Եվ հատիկը այդ նրանք օրհնեցին Ու սուրբ անունով Հաց անվանեցին: Մարդիկ մոտեցան, տեսան՝ խոտի մեջ



Այդ հատիկներից շատ է մնացել, Իսկ երբ փորձեցին, շատ ուրախացան Եվ որոշեցին պահել, պահպանել, Մարդկանց մատուցել:

(Այդ ընթացքում մի քանի երեխա մոտենում են ցորենի հասկերին և համտեսում):

Հացը սուրբ է, մի՛ կասկածեք, Հացը նուրբ է, լավ իմացեք: Գիտե՛ք ինչքան դժվարությամբ Մեր պապերը այս քարքարոտ երկրում Քարը շարժել, հողը փորել, սերմը ցանել, Արտը ջրել, մշակել են, ապա հնձել ու կալել են:

Հետո բերքը աղաց տարել, Ջրաղացում աղացել են ու պարկերով տուն են բերել, Խմոր շաղել, թոնիկ վառել և սուրբ լավաշ հաց են թխել: Դուք այս բանը լավ իմացեք և սուրբ հացը խնայեցեք:

(Երգ. «Անձրև-անձրև»)

Անձրև-անձրև, վա՛ր արի, Մեր դաշտերում պա՛ր արի, պա՛ր արի, Մեր դաշտերում պա՛ր արա, Օրը մթնել, ամպել ա, Երկինք-երկիր թխպել ա, մթնել ա, Արտերի ցորեն հացը, Խշխշալով երգ է ասում, հասել ա:

Աշխարհում առաջին ցորենն աճել է այն ժամանակ, երբ Մասիսի ճակատին դեռ ձյուն չէր մատնում: Այդ ցորենը կլոր ու կարմիր մի հատիկ էր: Դրանից էլ իրենց գույնն են առել հայերի այտերը:

Հեղինակ: Շատ ու շատ տարիներ առաջ

Հայաստանում հացը թխում էին վահանաձև սաքերի վրա: Բայց մի անգամ Ասորեստանի Սև արքան գրավեց Հայոց աշխարհը և հրամայեց.

(Ներս է մտնում Սև արքան իր զինվորներով):

Սև արքա: Հավաքե՛ք վահանաձև սաքերը և այլևս դրանցով հաց չթխեք:

(Չինվորները վերցնում են վահանաձև սաքը և տանում):

Հեղինակ: Այսպիսով նա հույս ուներ սովի մատնել հայերին և բնաջնջել: Բայց հայերին օգնության եկավ կալի աստվածուհի Հացանուշը:

Հացանուշ աստվածուհի: Իմ հայ ժողովուրդ, թող ամեն մարդ իր տան ներսում կավից գետնափոր փուռ-թոնիկ սարքի և հացը թխի դրա մեջ:

(Հանում են թոնիկը):

Հեղինակ: Հայերը լսեցին աստվածուհուն և սկսեցին հացը թխել թոնիկ մեջ: Իսկ Սև արքային այդպես էլ չհաջողվեց ոչնչացնել հայերին:

Այլուր ենք մաղում, խմոր ենք անում, Գրտնակի տակ արագ-արագ գնդերը բացում:

Հետո ձեռքերով, ուրախ երգելով՝ հատիկ-հատիկ Թոնիկ պատին լավաշ ենք թխում:

Հանում ենք տաք-տաք լավաշը բարակ, Մաքուր, սպիտակ սփռոցի տակ դարսում ենք արագ: Լավաշը կտրում, պանիր ենք դնում, Եկեք, եկեք դուք էլ կերեք, լավաշ ենք ուտում:

Բուրավետ լավաշը Հայաստան աշխարհի արար:

Հագործությունն է: Այն ճերմակ է, ախորժագրգիռ, քաղցր ու բարակ:

Բայց ինչո՞ւ է այսքան բարակ: Գուցե ճակատագի՞րն է նրան ծեծել, ինչպես հային: Եվ հայի բախտի պես բարակել, բայց ավելի է քաղցրացել:

Իսկ հիշո՞ւմ եք ժողովրդական գրույցը Արամ անունով հայոց արքայի և լավաշի մասին:

Այո՛, Հայոց արքա, Արամը գերի է ընկնում ասորիների թագավոր Նոսորին: Հաղթած ասորի թագավորը պայման է դնում՝ Հայոց արքան տան օր կմնա անոթի, տասնմեկերորդ օրը կմրցի իր հետ: Եվ եթե հաղթե՛ք՝ արքայավայել ընծաներով կվերադառնա Հայաստան:

Խելացի էր Հին Հայաստանի գերեվարված արքան: Նա պահանջում է Ասորեստանի սահմանի մոտ կանգնած հայկական բանակից բերեն իր ամենագեղեցիկ լանջապանակը:

Հայերը հասկանում են իրենց արքայի ակնարկը: Նրանք շա՛տ բարակ հաց են թխում, այնքա՛ն բարակ, որ տեղավորվեր լանջապանակի մեջ:

Եվ որտեղի՞ց իմանային ասորի բանբերները, որ իրենց իսկ ձեռքերով հաց են տանում հայոց արքայի համար:

Ասորի բանբերները չէին կարող հասկանալ, որ հայերը գրահի մեջ հաց են թաքցնում ու հասցնում իրենց արքային:

Չէին կարող հասկանալ, որ Արամ արքայի

գրահի մեջ թաքնված է նրա ուժը՝ հայկական հացը:

Ասորի թագավորը չէր կարող իմանալ, որ տասն օր շարունակ հայոց արքան սնվել է իր հայրենի հացով և դարձել անպարտելի:

Հաղթե՛ց, հաղթե՛ց Արամ արքան և տուն վերադարձավ պատվով:

Հաղթե՛ց, վերադարձավ և հրամայեց. «Այսուհետև Հայաստանում հաստ ու բազմաձև հացերի հետ թխել նաև ճերմակավիթուր լավաշ»:

Եվ մինչ այսօր հայի սեղանը զարդարում է նրբաթերթ, քաղցրահամ, ճերմակ ու կյանքով լի բուրավետ լավաշը:

Մե՛ր լավաշը: Մե՛ր, քանզի նրա մեջ մեր ոգին է, մեր ձևը, մեր մեղեդին, մեր հնչյունը, մեր կարկաչը, մեր համազգային-համամարդկային փրկությունը:

Մեր լավաշ հացը մեր պարգույնն է, Որ բաց ենք անում ամենքի առաջ:

Մեր լավաշ հացը մեր պատմությունն է, Կրակի բոցում թրծված ու հառնած:

Մեր լավաշ հացը մեր տրտմությունն է, Համբերությունն է մեր կարկտահար:

Մեր լավաշ հացը մեր եռությունն է, Մեր Հաց-հավատը՝ աղոթք ու նշխար:

Մեր լավաշ հացը մեր սրբությունն է, Երդվել, երդվում ենք միշտ հացի առաջ:

Երգ (ընտրությամբ)

Էլի ցորենն է աշխարհի հիմքը, Փա՛ռք տանք ցորենին ու օրհնաբանենք, Ցորենի մահով մահը խափանենք, Էլի ցորենն է աշխարհի հիմքը:

Մայրը հողն է սուրբ, հայրը՝ երկինքը, Հող դարձրեք քարը և ցորեն ցանեք, Էլի ցորենն է աշխարհի հիմքը, Փառք տանք ցորենին և օրհնաբանենք:

Թվում է, թե շատ է էժան, Բայց կյանքի պես թանկ է, Նա ապրուստն է ամենօրյա Աշխատավոր ժողովրդի:

Հացը պատիվ է, հացը չեն նետի, Քրտինք կա ամեն մասնիկում նրա: Հացը բաժանի՛ր, տուր մուրացկանին, Թող անուշ անի ու բարի խոսքով Քեզ օրհնաբանի:

Հացի պատիվը հացագործի պատիվն է, հողի ազնիվ մշակի պատիվը:

Հացին պատիվ տալը բոլորի պարտքն է:

Հացը խնայելով դառնում է պատվելի ու պաշտելի:

Հացը սկսվում է դաշտից, անցնում է մի երկար ու դժվար ճանապարհ: Նրան ուղեկցում է հողի մշակը, ուղեկցում չարչարանքով, որ ծիլը ցողուն դառնա ու հասկազարդվի, հասունանա ու արարվի հանապազօրյա հացը:

Հայոս ցորեն ցանեց, Եվ երբ ծլեց արտը, Նայեց ու հիացավ:

Եվ երբ եկավ ժամը, Արտը հասկակալեց, Նայեց ու հիացավ:

Նա իր հողոտ բուն Ցորեն հասկը սեղմեց, Եվ... մեծ հրաշք եղավ:

ԿԱՊԵՐ

ՃԱՆԱԳՈՂԱԿԱՆ ԱՅՅՑ ԱՐՅԱՆ

Վերջերս իմ հրավերով ընկերոջս՝ Գ. Արարատի մարզի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ՆԶՊ պատասխանատու, առաջատար մասնագետ Սուրեն Շահինյանի ղեկավարությամբ Արցախ այցելեցին մարզի Մասիսի տարածաշրջանի մի քանի դպրոցների գինվորական ղեկավարներ (մայր Գագիկ Ստեփանյան՝ Մասիսի տարածաշրջանի ավագ զինղեկ, Ջրահովիտի միջնակարգ դպրոց, մայր Յուլիա Ստեփանյան՝ Մասիսի հ. 5 ավագ դպրոց, կապիտան Միքայել Միքայելյան՝ Այնթապի հ. 1 միջնակարգ դպրոց, ավագ լեյտենանտ Մանվել Գրիգորյան՝ Գեղամիսի միջնակարգ դպրոց, լեյտենանտ Ռուտան Մնացականյան՝ Արգավանդի միջնակարգ դպրոց)։ Առաջին հանդիպումը կայացավ Քաշաթաղի շրջանի Քարեգահի միջնակարգ դպրոցում։ Ներկա էին նաև Քաշաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը և առաջատար մասնագետ, ՆԶՊ գծով տեսուչ Ռոբերտ Պետրոսյանը։ Գործընկերների ուսուցչական կազմին ներկայացրեց տնօրեն Վոլոդյա Գալստյանը՝ տեղեկացնելով, որ այցի նպատակը ճանաչողական է։ Ջրույցը հիմնականում վերաբերում էր կրթական համակարգին, ՆԶՊ առարկայի ուսուցման մեթոդներին, ուսումնական զենքի, համապատասխան պատահանների կիրառմանը և այլն։ Այնուամենայնիվ, կարևորվեց այն, որ մեր երկու հանրապետությունների դպրոցների միջև կապը պետք է ամրապնդվի, հաճախակի դառնան փոխադարձ այցերը, նաև՝ աշակերտների մասնակցությամբ։ Ջրույցից հետո դպրոցի բարձր դասարանցիների մասնակցությամբ կայացավ արհիության դաս, որը վարեց Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի ավագ զինղեկ, Ջրահովիտի դպրոցի զինղեկ, պահեստի մայր Գագիկ Ստեփանյանը։ Խոսելով հայրենասիրության մասին՝ Գ. Ստեփանյանը նշեց, որ հերոսները հենց Քարեգահի դպրոցի աշակերտներն են, որ այստեղ բնակվելով շենացնում են հայրենի երկիրը, որն ազատագրվել է նույն երեխաների հայրերի ու պապերի հերոսացման շնորհիվ։ Մասիսի ավագ դպրոցի զինղեկ, մայր Յուլիա Յովհաննիսյանը լրացրեց գործընկերոջ խոսքը՝ հավելելով, որ ամենահզոր զենքը զինվորիցն է, ոգին։ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը ողջունեց զինղեկների այցը՝ ասելով, որ ցանկալի են նման հանդիպումները, արհիության դասերը, պետք է ամրապնդվեն փոխադարձ կապերը։ Գործընկեր

դպրոցին տրամադրեցին որոշ դիդակտիկ նյութեր, պատահաններ, ուսումնական ձեռնարկներ։ Սուրեն Շահինյանը նշեց, որ ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ մի քանի դպրոց այցելել, իսկ այցը Քարեգահի դպրոց պատահական չէ։ Դպրոցի տնօրենը նրա ուսանողական ընկերն է, և որոշվեց հնարավոր մեթոդական օգնություն ցուցաբերել կրթօջախին։ Գործընկերների այցը ողջունեց նաև Քարեգահի համայնքի ղեկավար, դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Մարինե Պետրոսյանը։

Գործընկեր տալով Քարեգահին՝ Արարատի մարզի ներկայացուցիչներին հետ շարունակեցինք շրջագայությունը՝ առաջինն այցելելով Շուշի։ Ղազանչեցոց եկեղեցում Սուրբ Խորանի տակի ավանդատանը, որտեղ ուղիղ կենտրոնում կանգնելով արտասանած բառերը արձագանքում են, Արգավանդի դպրոցի զինղեկ Ռուտան Մնացականյանը կատարեց շարական՝ ոգևորելով նաև հոգևորականին։

Գաղտնի կանգառը պատմական Տճրիկի մոտ էր։ Երկհազարամյա հսկան գերեց իր գեղեցկությամբ, հզորությամբ, արցախցու վեհությամբ։ Սակայն մի բան շատ ցավալի է. չգիտես ինչու են այս ծառի մոտ գալիս այնպիսիները, որոնց այցի հիմնական նպատակը «մի կտոր հաց ուտելն է»։ Ամենուրեք պոլիէթիլենային տոպրակներ, ափսեներ, բաժակներ, շշեր և այլ աղբ ու սննդի մնացորդներ են թափված։ Փորձում ենք տարածքն ինչ-որ չափով մաքրել աղբից, սակայն դրա համար երկար ժամանակ է պետք։ Այնուամենայնիվ, որոշ աշխատանք կատարում ենք։

Ծրագրի հաջորդ կանգառը Ազոխ գյուղն էր։ Մթնշաղին հասանք Ազոխ։ Գիշերեցինք դպրոցի տնօրեն Իլյա Պողոսյանի տանը։ Առավոտյան Ազոխի դպրոցում ենք։ Գնաց սկզբում գերեցիկ ու կոկիկ հագնված աշակերտները ստեղծեցին տպավորություն, որ գյուղը լավ կրթօջախ ունի։ Քանի որ դպրոցի տնօ-

րենն անհետաձգելի գործ ուներ Ստեփանակերտում, մեզ դիմավորում են ուսմասվար Ապրես Ավանեսյանը և տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Նվարդ Պետրոսյանը։ Մինչև դասերն սկսվելը՝ աշակերտները դպրոցի բակում ֆիզկուլտուրայի ուսուցչի գլխավորությամբ կատարեցին մարմնամարզական վարժություններ և նորանցան դասարաններ։ Դպրոցում սովորում է 142 աշակերտ, աշխատում 26 ուսուցիչ։ Այս տարի առաջին դասարան է ընդունվել 13 աշակերտ՝ անցյալ տարվանից 2-ով պակաս։ 12-րդ դասարանը կավարտի 10 աշակերտ, ո-

կերտները լավ կրթություն ստանան, դաստիարակվեն հայրենասիրությամբ, հայի կերպարով, արցախցու ավանդույթով։ Դպրոցի բոլոր դասարանների միջանցքի պատերին տարբեր պատկերներ, լուսանկարներ, պատի թերթեր և այլն պատմում են գյուղի, դպրոցի անցյալի ու ներկայի մասին, Գայոց ազատամարտից։ Մի պատի վրա էլ փակցված են տարբեր տարիների շրջանավարտների խմբանկարներ։ Այնթապի թիվ 1 միջնակարգ դպրոցի զինղեկ, կապիտան Միքայել Միքայելյանը ցույց է տալիս մի լուսանկար՝ ասելով, որ իրենց աշխատանքային ընկերն է։ Ուրախալի է, որ դպրոցական նոր շենքի կառուցումը շուտով կավարտվի, և հույս կա, որ եկող ուստարում մեր աշակերտներն ուսումնական գործընթացը կշարունակեն նոր շենքում։ Այս շենքի կառուցումն սկսվել էր դեռևս խորհրդային տարիներին, սակայն սկսվեց Արցախյան շարժումը, և բնական է, շինարարությունը կանգ առավ։ Այժմ վերսկսվել է շինարարությունը՝ իհարկե, նոր հիմքի վրա։ Ուսուցչական կազմի հետ գրույցի ընթացքում որոշվեց հաստատել բարեկամական կապեր և փոխայցելություններ։ Գործընկեր տալով դպրոցին՝ այցելում ենք Ազոխի պատմական քարանձավը։ Մեզ ուղեկցում են դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներ Նվեր Ամիրյանը, Մարսել Բաբայանը և տասնմեկերորդից Յուրա Սարգսյանը։ Գնաց սկզբից բոլորս էլ շնորհակալ ենք տղաներին, ովքեր մեծ սիրով մեզ ուղեկցեցին, ծանոթացրին իրենց հայրենի բնաշխարհին, ուղեցույց եղան մութ ու խոնավ, չղջիկներով լի քարանձավում, որտեղ առանց ուղեկիցների հնարավոր է՝ մարդ մոլորվի կամ մեծ դժվարությամբ դուրս գա մեր նախնիների բնակատեղիից։ Մտնելով հարավարևելյան մուտքից՝ մյուս կողմից դուրս ենք գալիս՝ ծանոթանալով 3 հիմնական սենյակներին, որոնք ունեն խոռոչներ, լի են նաև թջնաղբով։ Այս կողմից ավի մեջ է Ազոխ գյուղը՝ թիկունքում անտառապատ սարալանջեր, քիչ հեռու՝ Տողասարը։ Տղաները տեղեկացնում են, որ իրենց անտառներում պատմական հուշարձաններ էլ կան՝ հին ու կիսավեր։ Գործընկեր ենք տալիս մեր ուղեկիցներին՝ հպարտ, որ նման սերունդ է աճում Արցախի այս չքմաղ շենքերում։

Գաղտնի նպատակակետը պատմական Ամարասն է։

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Նրա բռուն հանկարծ Գաղտնիները բոլոր Մարգարիտներ դարձան։

Եվ Արարչի նման Գայոց նորից, Նայեց ու հիացավ։

Գետո շռայլ բռով Մարգարիտներն անթիվ Ցրեց երկինքն ի վեր։ Եվ երկնքում անծիր Շողոզացիքն բազում Ցորեն-ցորեն աստղեր... Գայոց առատությունը ստեղծվում է հողաբույր ձեռքերի հոգնությամբ։

Երբ մեկը թոնիր է վառում ու հաց թխում, առաջին մեկ-երկու հացը բաշխում է հարևանին։ Գայերն ունեն հացի բազմազան տեսականի, բայց հացերի արքան լավաշն է։

Մինչև հացը հաց է դառնում, Տաք քրտինք են նրան խառնում, Վարում, ցանում, ջրում, քաղում...

Ցորենն ապա մի լավ աղում Ու նրանից հաց են թխում... Գաց՝ սրբազան, հաց՝ կյանք մի բուռ, Գաց՝ խնկահամ, անուշաբույր...

Ամենքը պիտի իմանան, որ հացը մինչև մեզ հասնելը երկար ու դժվար ճանապարհ է



Ամենքը, այն պետք է խնայողաբար ու աչքի լույսի պես օգտագործել։

Սուրբ է հացը ու կենսական, Գայոց համար ով չի քրտնում, Նրա կյանքը շուտ է մթնում...

Մարդն իր օթևանում ապահով տեղ է տվել հացին։ Գացը գետնին չեն գցի։

Տաշտները լի հաց լինի, Դռները միշտ բաց լինի։

Գացը սուրբ է, պետք է ոտքի վրա կտրել։ Գող բռնես՝ ոսկի դառնա, հացով մարդ լինես։ Երբ հյուր է լինում հայոց օջախում, Սուփրա-սեղան է ուրախ գցվում, Չուռնա-դիղվով, թարմ թխած հացով Ռանկագին հյուրին հացի են կանչում։

Թող տունը խաղաղ լինի, հացը՝ սպիտակ։ Զրաղացիդ միշտ հերթ լինի, մեջքդ ամուր բերդ լինի։ Գացը մարդու հանապազօրյա աստվածն է, որ միշտ նրա հետ է, նրա կողքին։ Դուք հացին վերևից մի նայեք,

Դուք հացը գլխից վեր պահեք, Սեղանին ինչ էլ որ լինի, Գացի դեմ խոնարհ մնացեք։ Մեր նախնիք հացը պաշտել են, Աստծո կարգին են դասել «Սուրբ» բառով հացին պատվել են Ու հացին արդար են ասել։ Թե գետնին փշուր է ընկել, Կռացել, վերցրել են գետնից, Որ հանկարծ բարին չցամաքի, Ու հացը տնից չկտրվի, Գացն է ձեզ հացի տեր անում, Սուրբ հացից ճանփան մի շեղեք, Մեր «արդար» բառով հիշեցեք Ու հացին արժանի եղեք։ Գարուստ ենք մենք մեր ունեցածով, Թոնրում թխած լավաշ հացով, Գայոցնիք ենք, հող ենք ցորյան, Գայ ենք, Գայ ենք ու Գայաստան։ Նվագ «ԱՐՅԱՆ» (դիղ) Թող որ հիմա թմբուկները զարկեն ուժեղ, Թող որ հնչի գուռնի երգը, Թող որ պար բռնի մեր այս խումբը։ Պարի, ինչպես հայոց երկիրը դարեր առաջ, Պարի խորխոր, պարի հպարտ, Ինչպես հայի հոգին անպարտ։ Պար՝ «Քոչարի»։

Կիանա ՍԱՐԳՍՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Ըստ Հ.Ա. Մինասյանի, Հ.Հ. Գաբրիելյանի «Ֆիզիկական կուլտուրա». գնահատումը հանրակրթական դպրոցում (2-12-րդ դասարաններ) ուսուցչի ձեռնարկի)

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատումն իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով: 10 միավորային սանդղակով:

Սովորողների ընթացիկ գնահատումը բաղկացած է երկու իրար լրացնող ձևերից՝ Առաջադիմության միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրաքանչյուր աստիճանի ստուգելիս և իրականացվում է գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով: Այն կատարվում է բանավոր հարցման և գործնական աշխատանքների միջոցով:

- Ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրաքանչյուր վերաբերյալ ուսուցչի կողմից արված առաջարկություններով, դիտողություններով:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ» ԱՈՒՐԱԿԱՅԻ ԸՆԹԱՑԻԿ ՄԻՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների միջային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին: Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող դեր:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ միավորային գնահատումը կատարվում է ծրագրային տարբեր բաժիններից՝ «Գիտելիքների հիմունքներ», «Մարմնամարզական վարժություններ», «Աթլետիկական վարժություններ», «Սարգախաղեր», «Շարժախաղեր»:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ արդյունքների միավորային գնահատում կատարվում է հետևյալ ստուգման տեսակներով՝ բանավոր հարցում, գործնական աշխատանք:

Ստուգման այս տեսակները նպատակ ունեն տարբեր տեսանկյունից չափել աշակերտի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները:

Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ: Միավորային գնահատման նպատակով կարելի է նաև օգտագործել թեմատիկ թեստային աշխատանքներ, ինչպես նաև տնային առաջադրանքները՝ որպես բանավոր հարցումներ:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմելու սովորողի մասին:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ» ԱՈՒՐԱԿԱՅԻ ԲԱՆԱԿՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրաքանչյուր ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Ֆիզիկական կուլտուրայի բանավոր հարցման ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրաքանչյուր ուսումնական նյութը՝ միաժամանակ դրսևորելով ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրաքանչյուր, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Բանավոր հարցում կարելի է իրականացնել՝

- առանձին սովորողների հարցման միջոցով,
- աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն մեթոդների, տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

- գիտելիքի իմացություն,
- կիրառելու կարողություն,
- ներկայացնելու կարողություն,
- միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Բանավոր հարցման գնահատումն առաջարկում ենք մեկ կիսամյակում յուրաքանչյուր երեխայի համար առնվազն երկու անգամ: Ներկայացնում ենք բանավոր հարցման մոնիթորինգային ներ:

ԲԱՆԱԿՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ 4-րդ դասարան

Թեմա - կոփման նշանակությունը և հիմնական կանոնները

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Իմանալ կոփման միջոցների և օդային արարողությունների մասին:	2
• Իմանալ արևային արարողությունների մասին:	2
• Իմանալ ջրային արարողությունների մասին:	2
• Իմանալ կոփման հիմնական կանոնները:	2
• Իմանալ կոփման նշանակության մասին:	2

8-րդ դասարան Թեմա - Տեղեկություններ հայ անվանի մարզիկների մասին

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Իմանալ ժամանակակից օլիմպիական խաղերի կազմակերպման և անցկացման մասին:	2
• Իմանալ օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցության և հայ օլիմպիական չեմպիոնների մասին:	3
• Իմանալ աշխարհի առաջնություններում հայ անվանի չեմպիոնների մասին:	3
• Իմանալ թիմային մարզաձևերում հայ մարզիկների նվաճումների մասին:	2

10-րդ դասարան Թեմա - Ինքնավերահսկողությունը և անվտանգության կանոնները ինքնուրույն ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Իմանալ ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ ինքնահսկման հիմնական կանոնները:	4
• Իմանալ ինքնուրույն ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ անվտանգության կանոնները:	4
• Իմանալ ֆիզիկական վարժություններ կատարելիս ինքնապահովման հնարքները:	2

ԲԱՆԱԿՈՐ ՀԱՐՑՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գնահատվող աշխատանքի թեմաները	Գնահատման չափանիշներ	Միավորներ
1. Առավոտյան մարմնամարզության և ֆիզիկական վարժությունների նշանակությունը առողջության համար:	1. Պատկերացում ունենալ առավոտյան մարմնամարզության նշանակության, օրգանիզմի վրա ունեցած դրական ազդեցության մասին: 2. Իմանալ առողջության համար ֆիզիկական վարժությունների նշանակության մասին: 3. Իմանալ անձի ֆիզիկական ներդաշնակ զարգացման գործում ֆիզկուլտուրայի նշանակության մասին:	4 4 2
2. Օրվա ռեժիմը և անձնական հիգիենան:	1. Պատկերացում ունենալ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի նշանակության մասին: 2. Իմանալ օրվա ռեժիմի բաղադրիչների՝ ուսման և հանգստի ճիշտ կազմակերպման մասին: 3. Իմանալ մարմնի, բնի, սննդի, հագուստի հիգիենայի մասին: 1. Պատկերացում ունենալ օրգանիզմի զարգացման համար ֆիզիկական վարժությունների նշանակության մասին: 2. Իմանալ իրենց հասակի երեխաների շարժական շարժողական բեռնվածության ծավալի մասին: 3. Իմանալ շարժողական ռեժիմի բաղադրամասերի մասին:	3 4 3 3
3. Շարժողական ռեժիմը:	1. Իմանալ կոփման նշանակության մասին 2. Իմանալ կոփման հիմնական կանոնները 3. Իմանալ արևային և օդային արարողությունների մասին: 4. Իմանալ ջրային արարողությունների մասին:	2 3 3 2
4. Կոփման նշանակությունը և հիմնական կանոնները:	1. Իմանալ ֆիզկուլտուրայի դասերի ժամանակ անվտանգության կանոնների պահպանման մասին: 2. Իմանալ մարզադահլիճում անվտանգության կանոնների պահպանման մասին:	4 3
5. Անվտանգության կանոնների պահպանումը մարզահրապարակում:	3. Իմանալ մարզահրապարակում անվտանգության կանոնների պահպանման մասին:	3
6. Ժամանակակից Օլիմպիական խաղերը:	1. Իմանալ ժամանակակից օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների մասին: 2. Իմանալ օլիմպիական խաղերի ծագման պատմությունը: 3. Իմանալ օլիմպիական խաղերում հայ մարզիկների մասնակցության և մեդալակիրների մասին: 4. Իմանալ օլիմպիական խորհրդանիշների մասին:	4 2 2 2
7. Տեղեկություններ «Աթլետիկա» մարզաձևերի և աթլետիկական վարժությունների մասին:	1. Իմանալ «Աթլետիկա» մարզաձևի մասին: 2. Իմանալ աթլետիկական վարժությունների անվանումները: 3. Իմանալ վազբերի կատարման տեխնիկան: 4. Իմանալ ցատկերի փուլերը և կատարման տեխնիկան: 5. Իմանալ նետումների կատարման տեխնիկան: 6. Իմանալ անվտանգության կանոնները աթլետիկական վարժությունների կատարման ժամանակ:	1 1 2 2 2 2
8. Բասկետբոլ մարզախաղի պատմությունը և խաղի կանոնները:	1. Իմանալ բասկետբոլ մարզախաղի ծագման և զարգացման պատմությունը: 2. Իմանալ բասկետբոլ մարզախաղի կանոնները:	3 4

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՄ

Table with 3 columns: Description, Details, and Count. Rows include items 9, 10, 11, and 12 regarding various services and materials.

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՄ» ԱՈՒՐԿԱԶԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողություններն կիրառել կյանքում հանդիպող տարբեր իրադրություններում, տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես ուսումնական թեմաների ուսուցմանն ուղեկցող պահանջներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.
- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրստրմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն նախատեսվում է տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքների կատարում:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գործնական են համարվում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին: Գործնական են նաև ուսուցման գործընթացում նախատեսվող՝ սովորողների ֆիզիկական պատրաստվածությանը նպաստակառողիված աշխատանքները:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերը հիմնականում գործնական աշխատանքներ են, որոնց ժամանակ գնահատվում են սովորողների կողմից ուսումնական ծրագրով նախատեսված տարբեր բաժինների՝ մարմնամարզական, աթլետիկական տարբեր վարժությունների, շարժախաղերի, մարզախաղերի (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ) գործնական կատարումները: Գործնական աշխատանքները մեկ կիսամյակում գնահատվում են՝

- 4-11-րդ դասարաններում՝ առնվազն 12 անգամ,
- 2-րդ, 3-րդ և 12-րդ դասարաններում՝ 8 անգամ:

12-րդ դասարանում գնահատումը կատարում են միայն առաջին կիսամյակում՝ 8 գործնական, 2-րդ կիսամյակում գնահատում չի կատարվում, տրվում են կրկնություններ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

12-րդ դասարանում 1-ին կիսամյակի գնահատականը (ԿԳ) դառնում է տարեկան գնահատական:

Տարբեր բաղադրիչներով (բանավոր, գործնական) միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ծրագրային ուսումնական նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի առաջադրանքներով: Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ, և դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր:

Աշակերտին միավորով գնահատելը պետք է լինի ճիշտ և արդարացի:

Սովորողների գիտելիքները գնահատող միավորի անարդարացիությունը կարող է հանգեցնել բազմաթիվ անցանկալի հետևանքների: Այն աշակերտի մեջ նվազեցնում կամ խալառ վերացնում է սովորելու ձգտումը, նա կորցնում է հավատը ուսուցչի և հասարակական արդարության նկատմամբ:

Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր է նախատեսվում ուսումնական տարվա մեկ կիսամյակը:

Ընթացիկ առաջադիմության գնահատականները պետք է գրանցել 10 (տասը) միավորային սանդղակով:

Ներկայացնում ենք գործնական աշխատանքի գնահատման մուշտրիմակներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱՌԵՕՐԻՆԱԿՆԵՐ

2 - րդ դասարան Թեմա - Հեռացատկ տեղից

Table with 2 columns: Description of tasks and number of points. Lists tasks for removing weeds from 90m to 140m distances.

3 - րդ դասարան Թեմա - Վազբ 20 մետր ընթացքից

Table with 2 columns: Description of tasks and number of points. Lists tasks for running 20m with various weights and distances.

4 - րդ դասարան Թեմա - Փոքր գնդակի /150գ./ նետում հեռավորության

Table with 2 columns: Description of tasks and number of points. Lists tasks for throwing a 150g ball at various distances.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ

5-րդ դասարան

Թեմա - Ցածր մեկնարկից վազք 30մ

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 7,2 վրկ, աղջիկներ՝ 8,0 վրկ,	4
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 7,1 վրկ, աղջիկներ՝ 7,8 վրկ	5
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 7,0 վրկ, աղջիկներ՝ 7,4 վրկ	6
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 6,8 վրկ, աղջիկներ՝ 7,0 վրկ,	7
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 6,6 վրկ, աղջիկներ՝ 6,8 վրկ	8
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 6,2 վրկ, աղջիկներ՝ 6,6 վրկ,	9
• Կարողանալ ցածր մեկնարկից 30մ վազել տղաներ՝ 6,0 վրկ և ցածր, աղջիկներ՝ 6,4 վրկ և ցածր:	10

6-րդ դասարան

Թեմա - Թափավազքով հեռացատկ «ոտքերը կծկված» եղանակով

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 260 սմ, աղջիկներ՝ 220 սմ	4
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 270 սմ, աղջիկներ՝ 240 սմ,	5
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 280 սմ, աղջիկներ՝ 250 սմ,	6
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 300, աղջիկներ՝ 270 սմ,	7
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 320սմ, աղջիկներ՝ 280սմ,	8
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 330 սմ, աղջիկներ՝ 290 սմ,	9
• Կարողանալ թափավազքով հեռացատկել տղաներ՝ 340սմ և ավելի, աղջիկներ՝ 300սմ և ավելի:	10

7-րդ դասարան

Թեմա- Թափավազքով բարձրացատկ «Զայլանցում» եղանակով

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 90 սմ, աղջիկներ՝ 85 սմ,	4
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 95 սմ, աղջիկներ՝ 90 սմ,	5
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 100 սմ, աղջիկներ՝ 95 սմ	6
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 103 սմ, աղջիկներ՝ 98 սմ	7
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 105 սմ, աղջիկներ՝ 100 սմ,	8
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 110 սմ, աղջիկներ՝ 105 սմ,	9
• Կարողանալ թափավազքով բարձրացատկել տղաներ 115 սմ և ավելի, աղջիկներ՝ 110 սմ և ավելի:	10

8 - րդ դասարան

Թեմա- Բասկետբոլ մարզախաղի տարրերի կատարում

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ բասկետբոլի գնդակը ճիշտ փոխանցել և ընդունել շարժման ընթացքում գույգերով:	2
• Կարողանալ գնդակը ճիշտ վարել աջ և ձախ ձեռքով արագության և ուղղության փոփոխումով:	2
• Կարողանալ գնդակը երկու ձեռքով նետել օդակին կանգնած դիրքից:	2
• Կարողանալ գնդակը նետել օդակին շարժման ընթացքում:	2
• Կարողանալ շարժման ընթացքում խաղընկերոջ դիմադրությամբ գնդակը վարել, փոխանցել, ընդունել և նետել օդակին:	2

9 - րդ դասարան

Թեմա- Վոլեյբոլ մարզախաղի տարրերի կատարում

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ վոլեյբոլի գնդակը ընդունել և փոխանցել վերևից՝ տեղում, առաջ շարժվելով, ցատկով:	2
• Կարողանալ կատարել ներքևից կամ վերին ուղիղ սկզբնահարված նշանակետին:	2
• Կարողանալ սկզբնահարվածից եկած գնդակը ընդունել երկու ձեռքով՝ ներքևից և վերևից:	2
• Կարողանալ կատարել ցանցի վրայով ուղիղ հարձակողական հարված:	2
• Կարողանալ կատարել հարձակողական հարվածի շրջափակում:	2

10-րդ դասարան

Թեմա - Ցածր մեկնարկից վազք 60 մետր

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 10,0 վրկ, աղջիկներ՝ 10,5 վրկ,	4
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 9,6 վրկ, աղջիկներ՝ 10,4 վրկ,	5
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 9,4 վրկ, աղջիկներ՝ 10,2 վրկ,	6
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 9,2 վրկ, աղջիկներ՝ 10,0 վրկ,	7
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 9,0 վրկ, աղջիկներ՝ 9,8 վրկ,	8
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 8,6 վրկ, աղջիկներ՝ 9,6 վրկ,	9
• Կարողանալ ցածր մեկնարկից 60մ վազել տղաներ՝ 8,4վրկ և ցածր, աղջիկներ՝ 9,4 վրկ և ցածր:	10

11 - րդ դասարան

Թեմա- Նռնակի նետում հեռավորության

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 22 մետր, աղջիկներ՝ 12 մետր,	4
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 24 մետր, աղջիկներ՝ 13 մետր,	5
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 26 մետր, աղջիկներ՝ 14 մետր,	6
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 28 մետր, աղջիկներ՝ 16 մետր,	7
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 30 մետր, աղջիկներ՝ 18 մետր,	8
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 32 մետր, աղջիկներ՝ 20 մետր,	9
• Կարողանալ նռնակը նետել տղաներ՝ 34 մետր և ավելի, աղջիկներ՝ 22 մետր և ավելի:	10

12 - րդ դասարան

Թեմա - Վազք 1000 մետր տղաներ, 500 մետր աղջիկներ

Գնահատման չափանիշները	Միավորներ
• Կարողանալ վազել տղաներ՝ 4, 10 – 4, 06 րոպե, աղջիկներ՝ 2, 20 – 2, 16 րոպե:	4
• Կարողանալ վազել տղաներ՝ 4, 05 – 4, 01 րոպե, աղջիկներ՝ 2, 15 – 2, 11 րոպե:	5
• Կարողանալ վազել տղաներ՝ 4,00 – 3, 56 րոպե, աղջիկներ՝ 2, 10 – 2, 06 րոպե:	6
• Կարողանալ վազել տղաներ՝ 3, 55 – 3, 51 րոպե, աղջիկներ՝ 2, 05 – 2, 01 րոպե:	7
• Կարողանալ վազել տղաներ՝ 3, 50 – 3, 46 րոպե, աղջիկներ՝ 2, 00 – 1, 56 րոպե:	8
• Կարողանալ վազել տղաներ՝ 3,45 – 3, 41 րոպե, աղջիկներ՝ 1, 55 – 1, 51 րոպե:	9
• Կարողանալ վազել տղաներ՝ 3,40 րոպե և ցածր, աղջիկներ՝ 1,50 րոպե և ցածր:	10

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՉԱՐԿԱՏԱԿԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից յուրաքանչյուր կիսամյակի վերջում աշակերտն ունենում է կիսամյակային գնահատական, իսկ ուսումնական տարվա ավարտին՝ տարեկան գնահատական:

Կիսամյակի ընթացքում ստուգման յուրաքանչյուր տեսակից (բանավոր, գործնական) աշակերտն ունենում է գնահատականներ, որոնց հիման վրա նշանակվում է կիսամյակային գնահատականը:

Դպրոցականի կիսամյակի գնահատականը ձևավորվում է ստուգման 2 տեսակների՝ բանավոր հարցման, որը մեկ կիսամյակում նախատեսվում է կատարել առնվազն 2 անգամ և գործնական աշխատանքների գնահատման (12 անգամ՝ մեկ կիսամյակում), գնահատականների հիման վրա:

Աշակերտի կիսամյակային գնահատականը ձևավորելիս պետք է առաջնորդվել գնահատման բաղադրիչների միջին թվաբանականը հաշվարկելու բանաձևով:

Այն ձևավորվում է հետևյալ կերպ.

Նմուշօրինակ՝

Դիցուք՝ սովորողը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից մեկ կիսամյակում ըստ գնահատվող բաղադրիչների ստացել է հետևյալ գնահատականները.

1. Բանավոր հարցում (Բ) 6, 8,

2. Գործնական աշխատանք (Գ) 9, 7, 9, 7, 7, 9, 8, 9, 7, 8, 8, 8

Աշակերտի կիսամյակային գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԿԳ = (Բ + Գ) : 14 = (6+8 +9+7+9+7+7+9+8+9+7+8+8+8) : 14 = 8

Սովորողի կիսամյակային վերջնական գնահատականը կլինի՝ ԿԳ = 8 միավոր:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից աշակերտի տարեկան գնահատականը ձևավորվում է երկու կիսամյակների գնահատականների միջին թվաբանականի հիման վրա: Եթե այն ամբողջ թիվ չէ, ապա որպես տարեկան գնահատական նշանակվում է այդ թվին անմիջապես հաջորդող թիվը, եթե երկրորդ կիսամյակի գնահատականը մեծ է առաջինից, իսկ հակառակ դեպքում՝ այդ թվին անմիջապես նախորդող ամբողջ թիվը:

Օրինակ՝ եթե 1-ին կիսամյակի գնահատականը 8 միավոր է, իսկ 2-րդ կիսամյակի գնահատականը՝ 9 միավոր, ապա տարեկան գնահատականը կլինի՝

ՏԳ = 8 + 9 = 8,5 = 9 միավոր:

Եթե 1-ին կիսամյակի գնահատականը 9 միավոր է, իսկ 2-րդ կիսամյակի գնահատականը՝ 7 միավոր, ապա տարեկան գնահատականը կլինի՝

ՏԳ = 9 + 7 = 8 միավոր:

Գնահատման սանդղակ 9-րդ դասարան

Տղաներ

Table with 11 columns: 10, 9, 8, 7, 6, 5, 4, 3, 2, 1. Rows include 1. Կազմ 30մ ընթ. /վրկ/, 2. Կազմ 60 մ. /վրկ/, 3. Գնահատական թափափազանք /սմ. /, 4. Բարձրագույն թափափազանք /սմ. /, 5. Փոքր գնդակի /150գ./ նետում /մ. /, 6. Կազմ 6 րոպե, 7. ձգումներ կախ դրությունից /անգամ/

Աղջիկներ

Table with 11 columns: 10, 9, 8, 7, 6, 5, 4, 3, 2, 1. Rows include 1. Կազմ 30մ ընթ. /վրկ/, 2. Կազմ 60 մ. /վրկ/, 3. Գնահատական թափափազանք /սմ. /, 4. Բարձրագույն թափափազանք /սմ. /, 5. Փոքր գնդակի /150գ./ նետում /մ. /, 6. Կազմ 6 րոպե, 7. ձեռքերի ծալում և ուղղում հետևում պառկած դրությ. /անգամ/

ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

- 1 միավոր գնահատվում է, երբ աշակերտը բացարձակ չի մասնակցում դասին:
2 միավոր գնահատվում է, երբ աշակերտը հրաժարվում է կատարել վարժությունը:
3 միավոր գնահատվում է, երբ աշակերտն ամբողջությամբ սխալ է կատարում վարժությունը:
4 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է, բայց անվստահ է, լարված և թույլ է տվել 2-ից ավելի նշանակալից սխալ:
5 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը հիմնականում կատարում է ճիշտ, բայց միաժամանակ թույլ է տվել 1 նշանակալի և 3 աննշան սխալ:
6 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը հիմնականում կատարում է ճիշտ, բայց միաժամանակ թույլ է տվել 1 նշանակալի և 2 աննշան սխալ:
7 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, ազատ, առանց լարվելու, բայց միաժամանակ թույլ է տվել 2 աննշան սխալ:
8 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, անկաշկանդ, պահպանել է ծրագրային պահանջները, բայց թույլ է տվել 1 աննշան սխալ:
9 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, ռիթմով, անկաշկանդ, պահպանել է ծրագրային բոլոր պահանջները:
10 միավոր գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, միաձույլ, հստակ, սահուն, վստահ՝ պահպանելով ծրագրային բոլոր պահանջները, ցուցաբերում է բարձր արդյունքներ:

Գնահատման սանդղակ 2-րդ դասարան

Table with 8 columns: 10, 9, 8, 7, 6, 5, 4. Rows include 1. Կազմ 20մ. ընթացքից /վրկ./, 2. Մաքրափազ 3x10մ. /վրկ./, 3. Կազմ 30մ. բարձր մեկնարկից /վրկ./, 4. Գնահատական տեղից /սմ. /, 5. Լցրած գնդակի (1կգ) նետում /մ. /, 6. Գնդակի /150գ./ նետում հեռավորության /մ. /, 7. ձեռքերի ծալում և ուղղում մարզաստարակին հետևում պառկած դրությունից /անգամ/

Գնահատման սանդղակ 3-րդ դասարան

Table with 8 columns: 10, 9, 8, 7, 6, 5, 4. Rows include 1. Կազմ 20մ. ընթացքից /վրկ./, 2. Մաքրափազ 3x10մ. /վրկ./, 3. Կազմ 30մ. բարձր մեկնարկից /վրկ./, 4. Գնահատական տեղից /սմ. /, 5. Լցրած գնդակի (1կգ) նետում /մ. /, 6. Կազմ 6 րոպե /մետր/, 7. Գնդակի /150գ./ նետում հեռավորության /մ. /, 8. ձեռքերի ծալում և ուղղում մարզաստարակին հետևում պառկած դրությունից /անգամ/

ՏԻՉԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱ

**Չնահատման սանդղակ
4-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 20մ. ընթացքից /կրկ./	4,3 և ցածր	4,4-4,5	4,6-4,9	5,0-5,3	5,4-5,6	5,7-6,0	6,1-6,4
2.	Մաքրբավազբ 3x10մ. /կրկ./	9,1 և ցածր	9,2-9,3	9,4-9,6	9,7-9,9	10,0-10,2	10,3-10,4	10,5-10,6
3.	Հեռացատկ տեղից /սմ./	160 և բարձր	155	150	140	130	120	110
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	280 և բարձր	270	260	240	220	210	200
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	95 և բարձր	93	90	88	85	82	80
6.	Վազբ 6 րոպե /մետր/	850 և ավելի	800	750	700	650	620	600
7.	Փոքր գնդակի /150գ/ նետում հեռավորության /մ./	25 և ավելի	24	22	20	18	16	15
8.	Լցրած գնդակի /1կգ/ նետում /մետր/	3,00 և ավելի	2,80	2,60	2,40	2,00	1,70	1,50
Աղջիկներ								
1.	Վազբ 20մ. ընթացքից /կրկ./	4,6և ցածր	4,7-4,8	4,9-5,0	5,1-5,3	5,4-5,7	5,8-6,2	6,3-6,5
2.	Մաքրբավազբ 3x10մ. /կրկ./	9,6 և ցածր	9,7-9,9	10,0-10,2	10,3-10,4	10,5-10,7	10,8-11,0	11,1-11,3
3.	Հեռացատկ տեղից /սմ./	140 և բարձր	135	130	125	120	110	100
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	250 և բարձր	240	230	220	210	200	180
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	90 և բարձր	85	80	78	75	72	70
6.	Վազբ 6 րոպե /մետր/	750 և ավելի	700	650	600	550	520	500
7.	Փոքր գնդակի /150գ/ նետում հեռավորության /մ./	16 և ավելի	15	14	13	12	11	10
8.	Լցրած գնդակի /1կգ/ նետում /մետր/	2,50 և ավելի	2,40	2,20	2,00	1,70	1,50	1,20

**Չնահատման սանդղակ
5-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	6,0 և ցածր	6,2	6,6	6,8	7,0	7,1	7,2
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	10,4 և ցածր	10,6	10,8	11,0	11,4	11,6	11,8
3.	Հեռացատկ տեղից /սմ./	165 և բարձր	155	150	140	130	120	115
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	300 և բարձր	290	280	270	250	230	220
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	100 և բարձր	97	95	93	90	85	80
6.	Վազբ 6 րոպե /մետր/	950 և ավելի	900	880	850	800	750	700
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	28 և ավելի	27	25	22	20	19	18
8.	Ձգումներ կախ դրությունից /անգամ/	7 և ավելի	6	5	4	3	2	1
Աղջիկներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	6,4 և ցածր	6,6	6,8	7,0	7,4	7,8	8,0
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	10,6և ցածր	10,8	11,0	11,4	11,6	11,8	12,0
3.	Հեռացատկ տեղից /սմ./	145 և բարձր	135	130	125	120	115	110
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	260 և բարձր	250	240	230	220	200	180
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	95 և բարձր	93	90	88	85	82	80
6.	Վազբ 6 րոպե /մետր/	850 և ավելի	800	780	750	700	650	600
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	18 և ավելի	17	16	15	14	13	12
8.	Ձեռքերի ծալում և ուղղում մարզանստարանին հենում պառկած դրությունից /անգամ/	8 և ավելի	7	6	5	4	3	2

**Չնահատման սանդղակ
6-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,8 և ցածր	5,9	6,0	6,2	6,4	6,6	7,0
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	10,0 և ցածր	10,2	10,5	10,8	11,0	11,5	12,0
3.	Հեռացատկ տեղից /սմ./	170 և բարձր	160	150	140	130	125	120
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	340 և բարձր	330	320	300	280	270	260
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	110 և բարձր	108	105	100	98	95	90
6.	Վազբ 6 րոպե /մետր/	1000 և ավելի	950	900	850	800	780	750
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	34 և ավելի	33	30	28	25	22	20
8.	Ձգումներ կախ դրությունից /անգամ/	7 և ավելի	6	5	4	3	2	1
Աղջիկներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	6,0 և ցածր	6,2	6,4	6,6	7,0	7,4	7,8
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	10,5 և ցածր	10,7	10,9	11,1	11,4	11,6	12,2
3.	Հեռացատկ տեղից /սմ./	150 և բարձր	145	140	130	125	120	115
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	300 և բարձր	290	280	270	250	240	220
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	105 և բարձր	100	97	95	90	87	85
6.	Վազբ 6 րոպե /մետր/	900 և ավելի	850	800	750	700	680	650
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	21 և ավելի	20	19	18	16	15	14
8.	Ձեռքերի ծալում և ուղղում մարզանստարանին հենում պառկած դրությունից /անգամ/	10 և ավելի	9-8	7	6	5	4	3

**Չնահատման սանդղակ
7-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,5 և ցածր	5,6	5,8	6,0	6,4	6,6	6,8
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	9,8 և ցածր	9,9	10,0	10,2	10,5	10,8	11,8
3.	Հեռացատկ տեղից /սմ./	180 և բարձր	170	160	155	150	140	130
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	360 և բարձր	350	340	330	320	300	270
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	115 և բարձր	110	105	103	100	95	90
6.	Վազբ 6 րոպե /մետր/	1050 և ավելի	1000	950	900	880	840	800
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	36 և ավելի	35	33	30	27	23	21
8.	Ձգումներ կախ դրությունից /անգամ/	8 և ավելի	7	6	5	4	3	2-1
Աղջիկներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,8 և ցածր	6,0	6,2	6,5	7,0	7,4	7,6
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	10,3 և ցածր	10,4	10,5	10,7	11,0	11,3	12,0
3.	Հեռացատկ տեղից /սմ./	165 և բարձր	160	155	150	140	130	120
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	330 և բարձր	320	310	300	280	250	230
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	110 և բարձր	105	100	98	95	90	85
6.	Վազբ 6 րոպե /մետր/	900 և ավելի	860	840	800	780	740	700
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	23 և ավելի	22	21	20	18	16	15
8.	Ձեռքերի ծալում և ուղղում մարզանստարանին հենում պառկած դրությունից /անգամ/	12 և ավելի	11-10	9-8	7	6	5	4

**Չնահատման սանդղակ
8-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,2 և ցածր	5,4	5,6	5,8	6,0	6,2	6,4
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	9,4 և ցածր	9,5-9,7	9,8-10,0	10,1-10,4	10,5-10,7	10,8-11,1	11,2-11,5
3.	Հեռացատկ տեղից /սմ./	200 և բարձր	190	180	170	160	155	150
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	380 և բարձր	370	360	340	320	300	290
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	125 և բարձր	120	115	110	107	105	100
6.	Վազբ 6 րոպե /մետր/	1100 և ավելի	1050	1000	950	900	880	850
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	40 և ավելի	39	38	35	30	25	23
8.	Ձգումներ կախ դրությունից /անգամ/	9 և ավելի	8	7	6	5	4	3
Աղջիկներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,7 և ցածր	5,8	6,0	6,2	6,5	7,0	7,4
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	9,8 և ցածր	9,9-10,1	10,2-10,4	10,5-10,8	10,9-11,1	11,2-11,3	11,4-11,7
3.	Հեռացատկ տեղից /սմ./	170 և բարձր	165	160	150	140	135	130
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	350 և բարձր	340	330	300	280	260	240
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	110 և բարձր	107	100	98	95	93	90
6.	Վազբ 6 րոպե /մետր/	950 և ավելի	900	860	840	800	780	750
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	26 և ավելի	25	24	23	20	18	16
8.	Ձեռքերի ծալում և ուղղում մարզանստարանին հենում պառկած դրությունից /անգամ/	14 և ավելի	13-12	11-10	9-8	7-6	5	4

**Չնահատման սանդղակ
9-րդ դասարան**

N	Վարժություններ	Միավորներ						
		10	9	8	7	6	5	4
Տղաներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	4,8 և ցածր	4,9-5,0	5,1-5,2	5,3-5,4	5,5-5,6	5,7-5,8	5,9-6,0
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	8,8 և ցածր	9,0	9,2	9,6	10,0	10,2	10,4
3.	Հեռացատկ տեղից /սմ./	220 և բարձր	219-215	214-210	209-205	204-200	199-195	194-190
4.	Հեռացատկ թափավազբով /սմ./	410 և բարձր	400	380	360	340	320	310
5.	Բարձրացատկ թափավազբով /սմ./	130 և բարձր	125	120	115	110	105	100
6.	Վազբ 6 րոպե /մետր/	1200 և ավելի	1150	1100	1050	1000	950	900
7.	Փոքր գնդակի նետում հեռավորության /մ./	42 և ավելի	41	40	36	33	30	28
8.	Ձգումներ կախ դրությունից /անգամ/	10 և ավելի	9-8	7	6	5	4	3
Աղջիկներ								
1.	Վազբ 30մ. մեկնարկից /կրկ./	5,5 և ցածր	5,6-5,8	5,9-6,1	6,2-6,4	6,5-6,7	6,8-7,0	7,1-7,3
2.	Վազբ 60մ. մեկնարկից /կրկ./	9,8 և ցածր	10,0	10,2	10,4	10,6	10,8	11,0
3.	Հեռացատկ տեղից /սմ./	180 և բարձր	179-175	174-170	169-165	164-160	159-155	154-150
4.	Հեռացատկ թափավազբից /սմ./	360 և բարձր	350	340	320	300	280	260
5.	Բարձրացատկ թափավազբից /սմ./	115 և բարձր	110	105	103	100	98	95
6.	Վազբ 6 րոպե /մետր/	1000 և ավելի	950	930	90			

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ

Չնախատման ասնդղակ 10-րդ դասարան

Table with 8 columns: N, Կարծրություններ, Միավորներ (10, 9, 8, 7, 6, 5, 4). Rows include 8 items for 'Տղաներ' and 'Աղջիկներ'.

Չնախատման ասնդղակ 11-րդ դասարան

Table with 8 columns: N, Կարծրություններ, Միավորներ (10, 9, 8, 7, 6, 5, 4). Rows include 8 items for 'Տղաներ' and 'Աղջիկներ'.

Չնախատման ասնդղակ 12-րդ դասարան

Table with 8 columns: N, Կարծրություններ, Միավորներ (10, 9, 8, 7, 6, 5, 4). Rows include 8 items for 'Տղաներ' and 'Աղջիկներ'.

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱԿՍՈՒՄ

Ուսուցանող գնահատման նպատակը և խնդիրները

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի ուսուցանող գնահատման նպատակն է ճշգրտել ծրագրային դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը և բացահայտել սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման պատկերը:

Ուսուցանող գնահատումն ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել հետագա գործողությունների քայլերը՝ ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատման և փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական թեմայի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունավետությունը, կատարում է իրավիճակից բխող փոփոխություններ:

Հետադարձ կապը ունեցած տեղեկատվության հիման վրա վիճակի բարելավման անընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր և գործնական աշխատանքների արդյունքների քննարկումներն ուսուցանող նպատակով: Ուսուցանող գնահատումը նպաստում է դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ աշակերտները, իսկ առաջավոր աշակերտներն առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Ուսուցանող գնահատումը սովորաբար կատարվում է առանց միավորների (թվանշանի), այլ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումները, վերլուծությունները և մեկնաբանությունները, որոնք հանձնատվում են պետական չափորոշչային պահանջների հետ:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱԿՍՈՒՄԱՆ ԱՏՈՒԳԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

Ուսուցանող գնահատման նպատակով առաջարկվում են ստուգման հետևյալ տեսակները.

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Տնային առաջադրանք
- Ինքնուրույն կատարման առաջադրանք

Ուսուցանող գնահատման գրանցումները կատարել ամիսը մեկ անգամ:

1. Բանավոր հարցում

Ուսուցանող նպատակով բանավոր հարցումն օգնում է ուսուցչին բացահայտելու, թե աշակերտն ինչ գիտելիքներ ունի և ինչ կարող է անել:

Ուսուցիչը բանավոր հարցում կարող է կատարել ծրագրային բոլոր բաժիններից՝ «Գիտելիքների հիմունքներ», «Մարմնամարզական վարժություններ», «Ալեքսիկական վարժություններ», «Մարզախաղեր» և այլն:

Բանավոր հարցման ղեկավարում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- հարցերն օգտագործել՝ բացահայտելու, թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի, թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- հարցերն օգտագործել աշակերտների հատկանշական թերըմբռնումները պարզելու և հետագա ուսուցումը բարելավելու համար,
- աշակերտի հարցերն օգտագործել նրա ըմբռնողունակությունը գնահատելու նպատակով: Այդ նպատակներն իրագործելու համար շատ կարևոր է գտնել և օգտագործել առավել արդյունավետ հարցեր և նպատակին հասնելու ձևեր: Ուսուցանող նպատակով բանավոր հարցման կիրառվող ձև է կարճ հարցումը: Բանավոր կարճ հարցման նպատակն է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի տիրապետման աստիճանը: Այն կարելի է անել առանձին աշակերտների հարցմամբ կամ դասարանին ուղղված հարցով: Այդ միջոցներով պարզվում են սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցվելու կարողությունը, տրամաբանությունը և արագ կողմնորոշվելու հատկությունը: Վիճակը ճշտելուց հետո ուսուցիչը ծրագրում է նկատված թերությունները վերացնելու հետագա աշխատանքները: Բանավոր կարճ հարցումներն օգտակար են հատկապես ուսումնական նոր նյութն աշակերտներին բացատրելուց հետո:

Աշակերտի ձեռքբերումների ճիշտ արժևորման համար կողմնորոշիչ հարցեր տալուց զատ, շատ կարևոր է աշակերտի պատասխաններն ուշադիր լսելը և դրանք մեկնաբանելու ու վերլուծելը:

Երբեմն աշակերտի տված հարցերից կարելի է հետևություններ անել, թե որքանով է նա կարողացել հասկանալ ուսումնական նյութը, ինչն է բնորոշ նրա թերըմբռնումներուն:

Բանավոր հարցման օրինակներ

Տարրական դասարաններ

- Ֆիզիկական վարժություններն ինչ նշանակություն ունեն մարդու առողջության համար:
- Ներկայացրու քո օրվա ռեժիմը:
- Անձնական հիգիենան և դրա կանոնների պահպանումը:
- Թվարկի օրգանիզմի կոփման միջոցները և կանոնները:

- Որո՞նք են մարզադահլիճում անցկացվող ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ անվտանգության կանոնները:

- Ե՞րբ և որտե՞ղ են տեղի ունեցել ժամանակակից առաջին օլիմպիական խաղերը:
- Ի՞նչ նշանակություն ունի առավելույն ունի առավելույն մարմնամարզությունը, և որո՞նք են նրա կատարման համար անհրաժեշտ պահանջները:

- Որո՞նք են ֆիզիկական վարժությունների կատարման հիգիենիկ կանոնները:
- Որքա՞ն պետք է լինի երրորդ դասարանում սովորողների շաբաթական շարժողական բեռնվածության ծավալը:
- Ներկայացրու «երկու ճամբար» շարժախաղի կանոնները:

Միջին դասարաններ

- Ի՞նչ է ռազմապետական սպորտը և ի՞նչ ռեժիմով պետք է այն ընդունել:
- Ի՞նչպիսի՞ վնասակար ազդեցություն է ունենում ծխելը մարդու առողջության վրա:
- Ի՞նչպիսի՞ ազդեցություն է ունենում պլոհոլի օգտագործումը մարդու առողջու-

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ

- 11** քան վրա. նրա վնասակար հետևանքները:
- Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում թմրանյութերի օգտագործումը մարդու առողջության վրա. նրա վնասակար հետևանքները:
 - Ե՞րբ են տեղի ունեցել հին հունական օլիմպիական խաղերը, և ինչպե՞ս էին դրանք կազմակերպվում:
 - Հին հունական օլիմպիական խաղերին հայ մասնակիցներից ովքե՞ր են դարձել հաղթողներ:
 - Որո՞նք են առողջ արելակերպի հիմնական բաղադրիչները:
 - Հայ մարզիկներն ինչպիսի՞ մասնակցություն են ունեցել ժամանակակից օլիմպիական խաղերին:
 - Որո՞նք են օլիմպիական խորհրդանիշները և արարողակարգերը:
 - Ի՞նչ է սպորտային էթիկան:
 - Թվարկի ֆիզիկական վարժությունների կատարման անվտանգության կանոնները:
 - Թվարկի ինքնուրույն ֆիզիկական վարժություններով պարապելիս ինքնահսկման (ինքնադիտման) ձևերը:
 - Որքա՞ն է բասկետբոլ խաղի տևողությունը, և յուրաքանչյուր թիմից քանի՞ խաղացող պետք է լինի խաղահրապարակում:
 - Որքա՞ն է հանդիս խաղի տևողությունը, և խաղի ընթացքում քանի՞ խաղացող պետք է լինի խաղահրապարակում:
 - Ի՞նչ չափերի է լինում վոլեյբոլի խաղահրապարակը, և յուրաքանչյուր թիմից քանի՞ խաղացող է մասնակցում խաղին:
 - Ֆուտբոլի խաղին յուրաքանչյուր թիմից քանի՞ հիմնական խաղացողներ են մասնակցում:
 - Որո՞նք են Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտեի (ԱՕԿ) գործառնությունները:

Ավագ դասարաններ

- Որո՞նք են օլիմպիական գաղափարախոսության համամարդկային արժեքները:
- Ինչպե՞ս կարելի է կարգավորել ինքնուրույն ֆիզկուլտուրայի պարապմունքների բեռնվածությունը:
- Ինչպե՞ս է կատարվում առաջին օգնությունը արյունահոսության դեպքում:
- Ինչպե՞ս է կատարվում առաջին օգնությունը կտրվածքների դեպքում:
- Ինչպե՞ս է կատարվում առաջին օգնությունը հոդախախտումների դեպքում:
- Ինչպե՞ս է կատարվում առաջին օգնությունը արևահարության դեպքում:
- Ինչպե՞ս է կատարվում առաջին օգնությունը ցրտահարության դեպքում:
- Ֆուտբոլ խաղի ժամանակ ո՞ր դեպքում է նշանակվում 11 մետրանոց հարված:
- Քանի՞ խաղափուլով է տեղի ունենում բասկետբոլ մարզախաղը:
- Վոլեյբոլ խաղի ժամանակ ի՞նչ որոշում է կայացվում, երբ խաղացողը միաժամանակ կրկնակի անգամ է հարվածում գնդակին:
- Հանդիս խաղի ժամանակ ո՞ր դեպքում է նշանակվում 7 մետրանոց տուգանային նետում:
- Որո՞նք են «Արդարացի խաղի» էությունը և սկզբունքները:

2. Գործնական աշխատանք

Այս առաջադրանքի նպատակն է պարզել ուսումնական առարկայի թեմայի կամ ենթաթեմայի տիրապետման աստիճանը:

Գործնական աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները կարող են լինել տարբեր տեսակների, և դրանք կարելի է կիրառել՝ կախված թեմայից և նպատակից:

Այդպիսիք են ծրագրային տարբեր բաժինների ենթաթեմաներից գործնական աշխատանքները, թեստերը:

Գործնական առաջադրանքները տրվում են ծրագրային տարբեր բաժիններից՝ մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, շարժախաղեր, մարզախաղերի (բասկետբոլ, ֆուտբոլ, վոլեյբոլ, հանդիս) տեսակներ և այլն:

Գործնական աշխատանքի օրինակներ

Տարրական դասարաններ.

- մեջքին պառկած դրությունից ընդունել կանգ թիակների վրա դրություն,
- գլուխկոնծի առաջ և հետ,
- հենում պառկած մեջքին, ոտքերը պահել ուղիղ անկյուն,
- քայլք ճիշտ կեցվածքով,
- քայլք հատակին դրված պարանի վրայով,
- ուսույուններ աջ և ձախ ոտքերի վրա,
- գնդակը վեր նետել և բռնել ոչ խորը կքանիստով,
- փոքր գնդակը նետել նշանակետին,
- գնդակի վարում, նետում պատին ու բռնում և այլն:

Միջին դասարաններ

- ընդհանուր զարգացնող մեկ համալիր վարժության կատարում,
- մեջքին պառկած դրությունից «Կամուրջ» վարժություն,
- գլուխկոնծի առաջ և հետ,
- ձգումներ պտտածոցից (տղաներ), մարզամտարանին հենում.
- պառկած դրությունից՝ ձեռքերի ծալում և ուղղում (աղջիկներ),
- ցատկեր ցատկապարանով,
- արագացումով վազք 30 մետր,
- թենիսի գնդակի նետում հեռավորության,
- ֆուտբոլի գլորվող գնդակի կասեցում ոտնաթաթի ներսի մասով,
- բասկետբոլի գնդակի վարում աջ և ձախ ձեռքով՝ վազքով,
- վոլեյբոլի գնդակի փոխանցում և ընդունում երկու ձեռքով,
- վոլեյբոլի գնդակով սկզբնահարվածի կատարում (ներքևից, վերևից),
- վոլեյբոլի գնդակով հարձակողական հարվածի կատարում և այլն:

Ավագ դասարաններ

- առավոտյան հիգիենիկ մարմնամարզության մեկ համալիրի կատարում,
- հավասարակշռություն մեկ ոտքի վրա և գլուխկոնծի առաջ,
- կախ դրությունից վերձգում բարձր պտտածոցի վրա,
- պտտածոցին թափահարումով՝ վերելք ուղղվելով,
- դանդաղ վազք 6 րոպե,
- արագացումով վազք 40 մետր,
- հարվածել ֆուտբոլի թռչող գնդակին ոտնաթաթի դիմային մասով,
- բասկետբոլի գնդակի վարում և նետում օղակին աջ և ձախ կողմերից,

- բասկետբոլի գնդակով տուգանային նետման կատարում,
- վոլեյբոլի վերին ուղիղ սկզբնահարվածի կատարում,
- վոլեյբոլի հարձակողական հարվածի կատարում, հարձակողական հարվածի ընդունում և այլն:
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից որպես գործնական առաջադրանք կարելի է հանձնարարել նաև թեստային աշխատանքների կատարումը, հատկապես միջին և ավագ դասարաններում:
- Այս դեպքում աշակերտը վարժվում է նաև թեստային առաջադրանքների կատարմանը, ինչպես նաև արագ և նպատակասլաց գործելուն:
- Այս տիպի աշխատանքները նպատակահարմար է կատարել յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելու ընթացքում՝ երկու անգամ:

1. Տնային առաջադրանք

Դպրոցականների սովորելը խթանելու արժեքավոր միջոց է տնային առաջադրանքների դերի բարձրացումն ու դրանց նկատմամբ մոտեցումների ճշգրտումն ու համակարգումը:

Աշակերտն իր անհատական տեսական և գործնական առաջադրանքները կատարելու է նաև տանը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրային բոլոր բաժիններից կարելի է հանձնարարել տեսական և գործնական տնային առաջադրանքներ:

Տեսական տնային առաջադրանքների օրինակներ.

- Կազմել օրվա ռեժիմ:
- Կոլման նշանակությունը, հիմնական միջոցները և կանոնները:
- Կազմել անձնական շարժողական ռեժիմը:
- Օլիմպիական խաղերի առաջացումը:
- ժամանակակից օլիմպիական խաղերը:
- Հայ մարզիկները ժամանակակից օլիմպիական խաղերում:
- Առողջ արելակերպը դպրոցականի կյանքում:
- Ֆիզիկական բեռնվածությունը և ինքնահսկման ձևերը:
- Բասկետբոլ մարզախաղի կանոնները:
- Վոլեյբոլ խաղի կանոնները և այլն:

Գործնական տնային առաջադրանքների օրինակներ.

- Կատարել առավոտյան հիգիենիկ մարմնամարզության վարժությունների համալիր:
- Աթոռին հենված դրությունից՝ ձեռքերի ծալում և տարածում:
- Մեջքին պառկած դրությունից իրանի բարձրացում:
- Մեջքին պառկած դրությունից ընդունել «Կամուրջ» դրությունը:
- Ձեռքերի ծալում և տարածում՝ մարզամտարանին հենված դրությունից:
- Հավասարակշռություն մեկ ոտքի վրա և գլուխկոնծի առաջ:
- Ձգումներ պտտածոցից (տղաներ):
- Տեղից հեռացատկել:
- Կատարել ցատկեր ցատկապարանով:
- Գնդակը նետել հեռավորության:
- Գնդակը նետել նշանակետին:
- Վազել արագացումով՝ 20-30 մետր:
- Դանդաղ վազել 2-3 կամ 4-5 րոպե:
- Գնդակը վարել աջ և ձախ ձեռքով:
- Ոտքով և գլխով գնդակին հարվածելու տարբերակներ:
- Վոլեյբոլի գնդակի փոխանցում և ընդունում:
- Գնդակով կատարել խաբուսիկ շարժումներ և այլն:

Ֆիզիկական կուլտուրայից գործնական տնային առաջադրանքներ հանձնարարելիս պետք է սովորողներին տեղեկացնել, որ պահպանեն հետևյալ կանոնները՝

- գործնական տնային առաջադրանքների կատարման տևողությունը չպետք է գերազանցի 15-20 րոպեին,
- տնային առաջադրանքները կատարվում են սնունդ ընդունելուց 1-1,5 ժամ առաջ կամ հետո,
- առաջադրանքների կատարումը պետք է ավարտել քնելուց 1-1,5 ժամ առաջ,
- առաջադրված վարժությունները պետք է լինեն մատչելի և բացառեն վնասվածքներ ստանալը:

Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները:

Տնային հանձնարարությունները պետք է լինեն այնպիսի ծավալի, որ դրանց կատարման համար աշակերտը ծախսի միջին հաշվով շաբաթական ժամաքանակի կեսից ոչ ավելին:

Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը:

Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

2. Ինքնուրույն կատարման առաջադրանքներ

Ինքնուրույն կատարման առաջադրանքի նպատակն է՝ պարզել աշակերտի անհատական աշխատանք կատարելու կարողությունը, առարկային տիրապետելու մակարդակը, հետազոտական-վերլուծական ունակությունը և գրականությունից օգտվելու կարողությունը:

Ինքնուրույն աշխատելու համար աշակերտին կարելի է հանձնարարել որոշակի առաջադրանք՝ գործնական (որևէ թեմայից գործնական վարժությունների կատարում) կամ ռեֆերատ (գիտելիքներ՝ տարբեր թեմաներից):

Ուսուցիչը կարողում, ուսումնասիրում է աշակերտի կատարած առաջադրանքը ու այն քննարկում աշակերտի հետ:

Տնային առաջադրանքներից բացի, ինքնուրույն կատարման այլ աշխատանքներն առավել կարևոր է հանձնարարել բարձր դասարանների աշակերտներին, հատկապես մասնագիտացված հոսքային խմբերում սովորողներին:

Ցածր դասարաններում կարելի է հանձնարարել գործնական աշխատանքներ:

Ուսուցանող գնահատումների համար նախատեսվում է գրանցումների մատյան: Մատյանում նշվում են սովորողների ձեռքբերումներն ու թերությունները, դասերին սովորողների մասնակցությունն ու ակտիվության աստիճանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ

Ամփոփիչ եզրակացությունները գրվում են կիսամյակի վերջում, մեկ անգամ:

Ուսուցանող և միավորային գնահատումների բնութագրիչ առանձնահատկությունները

Միավորային գնահատումն իրագործվում է ուսումնական նյութի որոշակի միավորի դասավանդման և ուսումնառության վերջում, որը վավերացնում է միայն աշակերտի առաջադիմությունը: Ի տարբերություն դրա՝ ուսուցանող գնահատումը կատարվում է դասավանդման և ուսուցման ընթացքում՝ աշակերտի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու նպատակով: Դրան հետևում են դասավանդման մեթոդների զարգացման և ուսման բարելավմանը միտված աշխատանքները: Ի դեպ՝ միավորային գնահատումն իր ազդեցությամբ ավելի բարձր հարգի է, քան ուսուցանողը:

Ուսուցանող և միավորային գնահատումները տարբերվում են նաև իրենց իրագործման մեթոդներով:

Միավորային գնահատումն իրագործվում է բանավոր կամ գրավոր ստուգումների, գործնական աշխատանքների արդյունքների գնահատման միջոցով:

Ուսուցանող գնահատումն իրագործվում է դասարանական հարցումներով, զույգերով կամ խմբային քննարկումներով, աշակերտների հետ հարցազրույցներով, գործնական առաջադրանքներով, թեստերով ու դրանց պատասխանների վերլուծություններով, ինչպես նաև վերը նշված մյուս ձևերով:

Միավորային գնահատման կարևոր առանձնահատկություններից են՝ արդյունքների վերջնական լինելը, առաջադրանքների տարբեր բարդությունը: Ուսուցանող գնահատման աշխատանքներն անընդհատ են, առաջադրանքներն՝ ավելի թեթև, հարցերը՝ բաց, հարցումները՝ հաճախակի, իսկ աշխատանքների ընթացքը՝ մասնակցային:

Գնահատումների երկու ձևերն էլ վերահսկելի են:

Ուսուցանող և միավորային գնահատումներն օգնում են միմյանց: Ստուգողական աշխատանքների և քննությունների արդյունքները կարելի է վերլուծել հայտորոշման և վիճակագրության նպատակներով:

Մասնավորապես հմտությամբ՝ այդ երկու գնահատումները պետք է համադրել այնպես, որ դրանք նպաստեն աշակերտի առաջընթացին:

Միավորային և ուսուցանող գնահատումների համեմատում

Table with 2 columns: Միավորային (Unit-based) and Ուսուցանող (Teacher-based). Rows include criteria like 'Իրականացվում է ուսուցման ավարտին', 'Գնահատմանն ուսումնական աշխատանք չի հետևում', 'Առաջադիմության արձանագրում՝ վկայավորում', 'Անհրաժեշտ է բարձր հուսալիություն', 'Ունի բարձր համարում՝ արժեք', 'Տրվում են միավորներ', 'Չարցերը փակ բնույթի են', 'Չիմասկանում անհատական աշխատանք է'.

Միավորային և ուսուցանող գնահատման արդյունքների գրանցումները՝ հաշվետվություն Ուսուցանող աշխատանքների արդյունքների գրանցումն օգտակար կարող է լինել ուսուցման և ուսումնառության որակի հետագա բարելավման համար:

Չեղարկված կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում հետևություններ՝ կապված ուսուցման ձևերի ու մեթոդների, պետական չափորոշիչների, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանների վերանայման անհրաժեշտության հետ: Դրանք բխում են հայտորոշիչ ստուգումներից, չափորոշչային գիտելիքի մակարդակի հետազոտությունից և կրթության բովանդակային բաղադրիչների կատարմանը միտված ուսումնասիրություններից: Այս գրառումները քննարկվում են առարկայական մասնախմբերում:

Հաշվետվությունում նշվում են դասարանի ընդհանրական ձեռքբերումներն ու թերությունները, դասերին աշակերտների մասնակցությունն ու ակտիվության աստիճանը, ինչպես նաև հետադարձ կապի և ինքնագնահատման միջոցով նրանցից յուրաքանչյուրի առաջընթացը և այն բնութագրող մեկնաբանություններ:

Ուսուցիչն արժևորում, այսինքն՝ դատողություններ է անում աշակերտի կատարածի և ձեռք բերած արժեքային համակարգի մասին: Այս գրառում-հաշվետվությունը նախատեսվում է ծնողների, դասուղեների և տնօրենության համար:

Տվյալ աշակերտի համար բոլոր առարկաներից ներկայացված հաշվետվությունները դասուղեկը կարող է վերլուծել և սովորողի հետագա առաջընթացի համար արժեքավոր խորհուրդներ տալ աշակերտին և ծնողին:

Այսպիսով, յուրաքանչյուր կիսամյակի վերջում ուսուցիչը ներկայացնում է աշխատանքային հաշվետվություն, որը հնարավորինս ամբողջական պատկերացում է տալիս յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության ընթացքի մասին:

Միավորային գնահատման հաշվետվությունը դասամատյանում ուսուցիչ արած գրանցումներն են, իսկ ուսուցանող աշխատանքների մասով՝ վերլուծական հաշվետվությունը և ուսուցանող աշխատանքներում արված նշումները:

Այդ աշխատանքների ձևն ու ծավալը պետք է համապատասխանեն առկա պայմաններին:

Ներկայացնում ենք «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի տարբեր բաժինների թեստային առաջադրանքի նմուշները:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ

ՀՀ ԿԳ նախարարի 01.02.2012 թվականի N 84 -Ա/ք հրամանով լրամշակվել են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների քննությունների նորմատիվային պահանջները:

Կից ներկայացնում ենք ավարտական դասարանների քննությունների նորմատիվային պահանջները:

ՀՀ հանրակրթական դպրոցների 9-րդ ավարտական դասարանում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի քննության նորմատիվային պահանջները

Table with 8 columns: N, Վարժություններ, Սեռը, and 4 columns for 10, 9, 8, 7, 6, 5, 4. Rows include 'Վազք 30 մետր /վրկ./', 'Չեղարկված տեղից /սմ/', 'Վազք 1000 մետր /րոպե/', 'Վազք 500 մետր /րոպե/', 'Չգումներ կախ դրությունից /անգամ/', 'Չեղբերի ծալում և ուղղում հենում պառկած մարզանստարանին դրությունից /անգամ/'.

ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների 12-րդ ավարտական դասարանում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի քննության նորմատիվային պահանջները

Table with 8 columns: N, Վարժություններ, Սեռը, and 4 columns for 10, 9, 8, 7, 6, 5, 4. Rows include 'Վազք 30 մետր /վրկ./', 'Չեղարկված տեղից /սմ/', 'Վազք 1000 մետր /րոպե/', 'Վազք 500 մետր /րոպե/', 'Չգումներ կախ դրությունից /անգամ/', 'Չեղբերի ծալում և ուղղում հենում պառկած մարզանստարանին դրությունից /անգամ/'.

ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Քննությունների անցկացման համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է քննական հանձնաժողով, որի կազմում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներից բացի կարող են ընդգրկվել դպրոցի տնօրենը կամ ուսումնական մասի վարիչը, հանրակրթական առարկաների ուսուցիչներ, զինղեկներ և այլ ներկայացուցիչներ:

- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ավարտական 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտներին անհրաժեշտ է ծանոթացնել քննությունների նորմատիվային պահանջների և անցկացման ժամկետների հետ:

- Քննությունների համար ընտրված վարժությունները նպատակ ունեն գնահատելու դպրոցականների արագաշարժության (վազք 30մ), արագառժային (հեռացատկ տեղից), դիմացկունության (վազք 1000մ տղ., 500մ աղջ.), ուժային (ծգումներ) ընդունակությունները:

- Քննությունները պարտադիր են հանրակրթական դպրոցի 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների բոլոր աշակերտների համար՝ բացառությամբ բժշկական հատուկ խմբերում ընդգրկված աշակերտների:

- Հանրակրթական դպրոցում բժշկական խմբերը կազմավորվում են ուսումնական տարվա սկզբին դպրոցի տնօրենի հրամանով, պետական բուժփիմնարկի (պոլիկլինիկայի) կողմից աշակերտի առողջության վերաբերյալ տրված տեղեկանքի հիման վրա:

- Բժշկական նախապատրաստական խմբերում ընդգրկված աշակերտների համար հեշտացվում են քննությունների պահանջները՝ վազք 30մ. հեշտացվում է 0,3 վրկ-ով, հեռացատկը՝ 20 սմ-ով, վազք 1000մ և 500մ՝ 10 վրկ-ով, ծգումները՝ 2 անգամ:

- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի քննությունները կազմակերպվում են հանրակրթական մյուս առարկաների քննություններն սկսելուց առնվազն 5 օր շուտ:

- Դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները քննություններից մեկ շաբաթ առաջ պետք է նախապատրաստեն քննությունների անցկացման համար օգտագործվող պարագաները, գույքը և արդյունքների գրանցման համար արձանագրությունների ձևը:

- Աշակերտները քննությունների հանձնմանը մասնակցում են մարզահագուստով և մարզակոշիկներով:

- Քննական հանձնաժողովը պարտավոր է ապահովել մասնակից աշակերտների անվտանգության տեխնիկայի կանոնների խստով պահպանումը և նախապատրաստել կազմակերպումը:

- Աշակերտի կողմից կատարված վարժությունների համար ստացած գնահատականների հանրագումարով որոշվում է վերջնական քննական գնահատականը:

- Քննություններից կարող են ազատվել նաև այն աշակերտները, որոնք քննությունից անմիջապես առաջ ենթարկվել են վիրահատության կամ տարել երկարատև հիվանդություններ:

- Քննական վարժությունների կատարման հերթականությունը ընտրում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները: Տեղից հեռացատկ վարժությունը կատարվում է երկու փորձով, և արձանագրվում է դրանցից լավագույնի արդյունքը:

- Քննություններից անբավարար գնահատական ստացած աշակերտները դպրոցի տնօրենի թույլտվությամբ հանրակրթական առարկաների քննությունների ա-

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԵ

13 Ը վարտից հետո կարող են վերահանձնել քննությունը, բայց ոչ ուշ, քան մանկավարժական խորհրդի որոշումը՝ աշակերտին կրթական փաստաթուղթ տալու մասին:

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Table with 15 rows and 10 columns. Columns include N, Name, Age, Education, and other personal details.

Հանձնաժողովի նախագահ՝ «Ֆիզիկական կուլտուրայի» ուսուցիչ՝ 20__թ.

ԱՐՈՎՅԱՆԻ ԴԱՏՎԱՆՆԵՐԸ ԴԱՅԻՄ ԲՈՒՄԾ



Շ ու շ ի ի Խ. Արովյանի անվան հիմնական դպրոցում հոկտեմբերի 15-ին տոն էր ու...

կիրառում ժամանակակից դասին ներկայացվող մեթոդներ, հնարներ, տալիս լրացուցիչ տեղեկություններ:

Նա պրպտող, ստեղծագործող ուսուցչուհի է, զբաղվում է ինքնակրթությամբ և հարստացնում գիտելիքները:

Հեղինակ է մի շարք մասնագիտական, մանկավարժական և հրատարակատեսակի հոդվածների: Թղթակցում է «Ազատ Արցախ», «Շուշի», «Լուսարար» և հայաստանյան մի շարք թերթերի: Դպրոցում կազմակերպել է բազմաթիվ գրական-գեղարվեստական, նշանավոր գործերի հոբելյաններին նվիրված միջոցառումներ:

Վ. Հակոբյանը դպրոցի հայոց լեզվի ու գրականության մեթոդավորման մասնագետ է: Ըստ նախորդ կազմված կարգացուցակի՝ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի մոտ կազմակերպում է բաց դասեր, հրավիրում նիստեր, կատարում քննարկումներ, գեկուցումներ, մասնակցում դպրոցի կողմից կազմակերպված մանկավարժական ընթերցումներին:

Նա իր փորձն ու գիտելիքները սիրով փոխանցում է գործընկերներին և աշակերտներին: Կարողանում է իր սաների մեջ սերմանել սեր դեպի մայրենին և գրականությունը:

Նրա աշակերտները տարբեր տարիների շարադրությունների մրցույթներում և առարկայական օլիմպիադաներում մրցանակային տեղեր են գրավել և արժանացել պատվոգրերի ու դրամական պարգևների: Նման պարգևների և խրախուսանքների է արժանացել նաև ուսուցչուհին:

Աշխատասիրության, ընկերասիրության, իր գործին նվիրվածության շնորհիվ Վ. Հակոբյանը արժանացել է աշակերտների, գործընկերների և ծնողական հասարակության հարգանքին:

Կոլեկտիվը բարձր է գնահատում նրա արժանիքները և շնորհավորում նրա 50-ամյա հոբելյանը՝ մաղթելով նորանոր հաջողություններ աշխատանքում:

Շուշիի Խ. Արովյանի անվան հիմնական դպրոցի կոլեկտիվ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԱՍԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է



«Մանկան հոգին նուրբ է ու քնքուշ, փխրուն ու զգայուն, որի համար էլ մենք՝ մանկավարժներս, պետք է փորձենք զգուշորեն ու քնքշությամբ, անմնացորդ սիրով ու ջերմությամբ թափանցել նրանց մատաղ հոգիները»,- ասում է գործընկերների և ծնողների շրջանում սեր ու հարգանք, հավատ ու վստահություն վայելող, իր սաների համար անփոխարինելի ուսուցիչ, Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի դասավար Գոհար Ավանեսյանը:

Նա համբերությամբ շտկում ու հղկում է, մշակում ու հստակեցնում դպրոցի շենը ուղիղ դրած մանկան խոսքի հոգին, շենացնող հողվորի պես բուռ առ բուռ սփռում բարության ու ազնվության սերմեր, որոնք հետագայում ծլում, ծաղկում հասունանում են: Նա իր հոգու ջերմությունը, մտքի թռիչքն է տալիս մատաղ սերնդին, իր վեհ կերպարով ապրելու և մաքառելու հավատ ու հույս է ներշնչում:

Գ. Ավանեսյանը ծնվել է 1962թ. հոկտեմբերի 7-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1979թ. ավարտել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցը: 1980թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը և ավարտել 1984թ.: Մինչև 1989թ. կատարել է տարբեր աշխատանքներ: 1989-1992թթ. աշխատել է հ. 1 միջնակարգ դպրոցում որպես դասավար:

1992-ից առայսօր աշխատում է հ. 5 հիմնական դպրոցում: 1997-2003թթ. դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների զծով տնօրենի տեղակալ էր: 2004-ից առայսօր դպրոցի դասավարների մեթոդավորման մասնագետ է:

Նա իր փոքրիկներին սովորեցնում, խրախուսում է կենդանի օրինակով, բարի ու իմաստուն խորհուրդներով, իր հնչուն ձայնով ու իմաստուն աչքերի խոհուն փայլով: Մանկավարժությունը նրա համար ամեն ինչից վեր է, ստեղծագործություն է: Նրա յուրաքանչյուր դաս յուրովի է, հագեցած, կապված կյանքի հետ: Նրա սաները ակտիվ են, էներգիայով լեցուն, խոսում են մաքուր հայերենով, զրագետ են, ամեն պահ սպասում են նորի ու գեղեցիկի, որի համար ջանք ու եռանդ չի խնայում սիրելի ուսուցչուհին:

Սիրելի՛ գործընկեր, քանի՛-քանի՛ մանկություն են ճանապարհել դեպի լույս, ի՞նչ հուզմունքով ու քնքշանքով, նվիրումով ու սիրով: Սրտի քնքուշ ինչքա՞ն ղողեր ու հպարտություն են ապրել, երբ տեսել են սաներիդ՝ հայոց այբ, բեն, գիմ-ը արտասանելիս:

Սիրելի գործընկեր, հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է հոբելյանիդ առթիվ: Թող որ քո կյանքի ամեն օրն անցնի ուրախ ու զվարթ:

Քեզ՝ առողջություն, ստեղծագործական եռանդ ու երջանկություն, իսկ քո սաներին՝ անհոգ մանկություն արցախյան խաղաղ երկնքի ներքո:

Ստեփանակերտի հ.5 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՏԱՐԻՆԵՐԻ ՎԱՍՏԱԿԸ



Երջանիկ ու հպարտ է այն ուսուցիչը, երբ իր սաների մեջ կարողանում է տեսնել իրեն՝ գիտելիքներով, բարոյական որակներով և ստեղծագործական կարողություններով:

Այդպիսիներից է Մարտակերտի շրջանի Դրմբոնի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, հունանիտար առարկաների մեթոդավորման ղեկավար Էլմիրա Խաչատրյանը:

Ծնվել է 1950թ. դեկտեմբերի 2-ին, Մարտակերտի շրջանի Լեմինավան գյուղում, մտավորականի ընտանիքում: 1967թ. ավարտել է Մարաղայի միջնակարգ դպրոցը՝

1972թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1972-1992թթ. աշխատել է Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցում:

1992թ. հունիսին բռնազաղթել է Մարտակերտից: 1992-93 ուստարում աշխատել է ՀՀ Նախրի շրջանի Ջորվան գյուղի միջնակարգ դպրոցում: 1993-94 ուստարվա սեպտեմբերից աշխատում է Դրմբոնի միջնակարգում:

Աշխատանքային գործունեության ընթացքում Էլմիրա Խաչատրյանին իրեն դրսևորել է որպես խելոք և բանիմաց մասնագետ: Գերազանց տիրապետում է առարկային, այն մատուցում է նպատակուղղված և հետաքրքիր, ինչի շնորհիվ մատուցվող նյութը դառնում է հյութեղ և հուզական:

Է. Խաչատրյանի մոտ փոխդասալսումները և կազմակերպված բաց դասերը ուսանելի են և հետաքրքիր:

Է. Խաչատրյանը ներդրողական միջոցառումների լավագույն կազմակերպիչ է: Նա ունի պատասխանատվության մեծ զգացում, խստապահանջ է, բայց և բարի ու խորհրդատու:

Մանկավարժական գործունեության 40 տարիների ընթացքում սերունդներին է փոխանցել հայոց լեզվի գանձերը, իր բարությունը, ընկերներին հարգելու և օգտակար խորհուրդներով նեցուկ կանգնելու մեծ կարողությունը:

Մեծ ուրախություն և հպարտություն ապրեցինք, երբ Էլմիրա Խաչատրյանի աշխատանքը գնահատվեց պետության կողմից:

Արցախին մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար բազմապատասխան ուսուցչուհի Էլմիրա Խաչատրյանն արժանացավ պետական պարգևի. 2012թ. հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի օրը, ստացավ ԼՂՀ վարչապետի հուշամեդալ:

Այս մեծ ու պարտավորեցնող պարգևի համար շնորհավորենք Էլմիրա Խաչատրյանին, ցանկանանք նրան ամենավաղ ու բարի՛ն՝ առողջություն, հաջողություններ անձնական կյանքում և հետագա մանկավարժական գործունեության մեջ:

Մարտակերտի շրջանի Դրմբոնի միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՁԴ

ՀՐԱՇԵՆՏԻ ԽՈՍՔ ՔՐՈՋՍ



Ուսուցչի օրը Չարենցավանում նստած են քառասունամյա մանկավարժական փորձ ունեցող, 1952թ. ծնված Սենուրա Աշոտի Մինասյանի՝ անկնճիռ, քիչ դալուկ, հավիտյան լռած ու անվրդով պառկած քրոջս նկարի առաջ: Նա լույս աշխարհ էր եկել, կրթություն ստացել Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Բաքվում ընդունվել է Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի տարրական կրթության հայկական բաժինը, որը շարունակել ու ավարտել է Ստեփանակերտում: Նախկինում հեռակա բաժինը մայիս-հունիս ամիսներին էին ընդունվում, ուստի համարյա մեկ տարի Բաքվում և աշխատում էր, և կար ու ձև կուրսերում սովորում: 1972թ. ես և եղբայրս Բաքվի նույն ինստիտուտում ավարտում ենք: Ինձ՝ բանասերիս, Արցախ, իսկ եղբորս՝ ֆիզիկայի մասնագետ Սլավիկ Մինասյանին, Քարհատի՝ Դաշքեսանի շրջանի Շահումյան գյուղում են գործուղում: Քույրս եղբորս հետ մեկնում է նույն տեղը՝ կենցաղային հարցերում օժանդակելու համար: Նա ևս աշխատանքի է անցնում՝ որպես տարրական դասարանի ուսուցչուհի, նաև միջին դասարաններում կար ու ձև սովորեցնում: Մեկ տարի անց եղբորս տանում են բանակ: Քույրս տեղափոխվում է տնօրենի՝ Մամիկոնյան Բալարեկի տուն: Թեև ծնողներս ընդդիմանում են, քույրս համաձայնում ու ամուսնանում է քարհատի ժողա երիցյանի հետ: Երեք տարի հետո ընտանիքով փոխադրվում են Չարենցավան, և քույրս աշխատանքի է անցնում հ. 5

դպրոցում: Թեև քաղաքում էր ապրում, բայց ուներ տնամերձ հողամաս ու այգի, ուր բանում էր միշտ, և զարմանալիորեն նուրբ, ճերմակ ու քնքուշ էին ձեռքերը: Պարտաճանաչ ու սիրված ուսուցչուհի էր: Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին նվիրյալ էր, բարու և ազնվության տիպար: Հարգանքով էր լցված մեծի ու փոքրի, դեկավարի ու գործընկերների հանդեպ: Սրտացավ ընկեր, բարեկամ ու հարևան էր: Ուներ բարձր պատասխանատվություն ցանկացած գործի նկատմամբ ու պարտքի զգացում: Աշխատանքի տեղից ուներ պատվոգրեր: Արցախյան գոյապայքարի ամենածանր օրերին, երբ վտարված էր Մարտակերտի շրջանի գյուղերի մեծ մասի բնակչությունը, եղբորս ընտանիքի աստարն էր, զավակներին պահում էր իր տանը, թեև ահավոր ծանր էր սննդի հարցը: Ավագ քույրս Բաքվից էր վտարված, մորաքույրս՝ Սուսանիքից: Նրանց աստար էր ամեն հարցով: Երկու դուստր՝ Լիլիթ ու Ռուզան, և մի ուսուր՝ Գագիկ, և չորս թոռ ունի: Թեև ամուսինը բազմանդամ ընտանիքի՝ ոչ մեծ, ոչ էլ փոքր տղան էր, բայց սկեսուրն ու ի ծնե հաշմված կեղտոտ եղբայրն ապրում էին քրոջս հետ (կեղտոտը մահացել էր մինչև ամուսնանալը): Շատ սրտացավ ու բարեկամսեր անձնավորություն էր: Անուսինը վեց տարի առաջ սպանվել է ուխտադրուժ գործընկերոջ ձեռքով: Ամուսնու կորստից խաթարվեց քրոջս առողջական վիճակը: Վեց տարի անց՝ Ուսուցչի օրը, առմիշտ հրաժարվեց այս լույս աշխարհից:

«Շնորհավոր տոնդ» ասեմ, թե մորմքվեմ ցավից...
 Դու ընդմիշտ կմնաս քեզ ճանաչողների հիշողությունում, իմ սիրելի քույր՝ որպես բարի, անաչառ, սրտացավ, աշխատասեր ու մարդասեր անձնավորություն:

Քեզ միշտ պաշտող՝
 Սիլվա քույրիկ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում գործող Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանը հայտարարում է ընդունելություն բնագիտամաթեմատիկական հեռակա դպրոցի (ԲՄՀԴ) համար:
 Բնագիտամաթեմատիկական հեռակա դպրոցը հանդիսանում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի բաժանմունքը, որն իրականացնում է անվճար կրթական ծրագրեր՝ հեռակա ուսուցմամբ հանրակրթական ավագ դպրոցի սովորողների համար: ԲՄՀԴ-ում դասընթացների տևողությունը 1-3 տարի է: Ուսուցումը ԲՄՀԴ-ում տարվում է փոստային կամ էլեկտրոնային եղանակով՝ կախված սովորողի հնարավորություններից: 1 տարվա ընթացքում յուրաքանչյուր առարկայից (մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) սովորողը պետք է կատարի 6-7 առաջադրանք: Կատարված առաջադրանքներն ուղարկվում են ԲՄՀԴ: Առաջադրանքները կազմված են դպրոցական ծրագրերի շրջանակներում: Նրանցում ներառված են տեսական հարցեր ու խնդիրներ և տարբերվում են բարդության աստիճանով: Առաջադրանքներն ստուգվում են ԲՄՀԴ-ի մասնագետների կողմից և հետ ուղարկվում տեսական հարցերի պատասխանների և խնդիրների մանրամասն մեկնաբանմամբ:

Առաջին հանձնարարության երկու առաջադրանքներից դրական գնահատված դպրոցականները ստացած արդյունքների հիման վրա համարվում են ԲՄՀԴ-ի սովորողներ: ԲՄՀԴ-ի սովորողները տարեկան առնվազն մեկ անգամ հրավիրվում են առկա ուսուցման դասընթացի, որը վարում են դպրոցի մասնագետները:
 ԲՄՀԴ-ի այն սովորողները, ովքեր ժամանակին կատարել են բոլոր առաջադրանքները և դրական գնահատվել, ստանում են ԲՄՀԴ-ի ավարտման վկայական: Վկայական ստացած, ինչպես նաև առկա դասընթացներում բարձր արդյունքներ ցուցաբերած սովորողները Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտ ընդունվելիս ազատվում են մասնագիտական առարկաների քննություններից:
 Առաջադրանքների պարբերական չկատարման և ժամանակին դրանք չուղարկելու դեպքում սովորողները դուրս են մնում դպրոցից, ինչի մասին նրանց տեղեկացվում է գրավոր:

Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտորապ

Հարցերով դիմել
 E-mail: sos.mailyan@mail.ru
 էլեկտրոնային հասցեով

Մարզական

ԳՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 17-19-ը Ստեփանակերտի համալսարանական մարզադաշտում ԼՂՀ հանրակրթական հիմնական դպրոցների դպրոցականների միջև կայացան աթլետիկայի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:
 Մրցումների ծրագրով նախատեսված էին՝
 - վազք 60 մետր,
 - գնդակի նետում թափավազքից,
 - հեռացատկ,
 - վազք 1500 մետր (տղաներ) և վազք 800 մետր (աղջիկներ),
 - փոխանցումավազք՝ 4 x100մ (տղաներ և աղջիկներ):
 Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր 5 տղա և 5 աղջիկ:
 Մրցումները, որ անց են կացվում ամեն տարի, անցան շատ համառ և անզիջում պայքարում:
 Մրցավարական հանձնախումբը, ի մի բերելով մասնակիցների արդյունքները, որոշեց թիմային և անհատական հաշվարկներով հաղթողներին:
 Թիմային հաշվարկով առաջին տեղը գրավեց Մարտունու շրջանի թիմը, երկրորդ տեղը՝ Մարտակերտի, երրորդ տեղը՝ Շուշիի հավաքականը:
 Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների և գավաթների, իսկ նրանց մարզիչները՝ համապատասխան կարգի մեդալներին:
 4x100մ փոխանցումավազքի մրցումներում 1-3-րդ տեղեր գրաված Մարտակերտի, Մարտունու, Հարդուքի շրջանների (տղաների միջև) և Շուշիի, Մարտունու շրջանների ու Ստեփանակերտ քաղաքի (աղջիկների միջև) թիմերի անդամները պարգևատրվեցին համապատասխան կարգի մեդալներով ու պատվոգրերով:
 Մեդալների ու պատվոգրերի արժանացան նաև մյուս չորս մրցածներում տղաների և աղջիկների մրցապայքարում անհատական հաշվարկով մրցանակային տեղեր գրաված դպրոցականները:
 Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Աթանեսյանը՝ մարզիչներին բոլոր մասնակիցներին մարզական և անձնական հետազգա հաջողություններ:

Հոկտեմբերի 23-26-ը Ստեփանակերտ քաղաքի հ. 3 միջնակարգ դպրոցի մարզադաշտում անցկացվեցին ԼՂՀ հանրակրթական դպրոցների դպրոցականների միջև «Ուրախ մեկնարկներ» (3-4-րդ դասարաններ) և «Հուսու մեկնարկներ» (5-6-րդ դասարաններ) մարզական խաղերի հանրապետական մրցումներ:
 Ծրագրով նախատեսված էին՝
 - համակցված փոխանցումավազք
 - փոխանցումավազք զինվորական աթռակներով
 - պարանի ձգում՝ թիմային
 - ավագների մրցույթ (աջլորակով)
 - համակցված փոխանցումավազք գլուխկոծի տալով:
 Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր 5 տղա և 5 աղջիկ: Անչափ հետաքրքիր ու անզիջում պայքարում անցած մրցումների արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց մրցանակային տեղեր գրաված թիմերին: «Ուրախ մեկնարկներ» խաղերում մրցանակային տեղերը բաշխվեցին՝
 3-րդ տեղ՝ Մարտակերտի հ. 2 հիմնական դպրոցի «Համարձակ աստղիկներ» թիմ
 2-րդ տեղ՝ Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի «Ոսկե խաչ» թիմ
 1-ին տեղ՝ Հարդուքի միջնակարգ դպրոցի «Դիզակ» թիմ
 Իսկ «Հուսու մեկնարկներ» խաղերում մրցանակային տեղերը բաշխվեցին՝
 3-րդ տեղ՝ Մարտակերտի հ. 1 ավագ դպրոցի «Տրաբերդ» թիմ
 2-րդ տեղ՝ Ստեփանակերտ քաղաքի հ. 1 հիմնական դպրոցի «Վարարակն» թիմ
 1-ին տեղ՝ Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի «Ոսկե խաչ» թիմ
 Թիմային հաշվարկով երկու մրցումներում մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների և գավաթների, իսկ թիմերի բոլոր անդամները՝ հուշանվերներին:
 Պարգևատրումները կատարեցին ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աթանեսյանը:
 Շնորհավորելով բոլոր հաղթողներին՝ նրանք մարզիչին մարզական և անձնական հետազգա հաջողություններ:

Սուրաթ ՀԱՅՐԱՄԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱԼՐԱՄԱՆ ԾՐԱԳԻՐ «Ուրախ գնացք» և «Իմ մոլորակը» ամսագրերի բաժանորդագրություն

Ծրագրի հիմնական նպատակը դպրոցական գրադարանների համալրումն է նոր հրատարակված գրքերով:
 Բավարար քանակով բաժանորդ ապահոված դպրոցների գրադարաններն անվճար կհամալրվեն «Էդիթ Պրինտ» գրատան գրքերով: Գրատան հասցեն է՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 35 ք (հեռ. (047)97-04-60):
 Ծրագիրն իրականացվելու է ներքոհիշյալ եղանակով.
 1. Դպրոցներում կազմակերպել «Ուրախ գնացք» (2-6-րդ դաս.) և «Իմ մոլորակը» (7-9-րդ դաս.) ամսագրերի 1 տարվա բաժանորդագրություն (կարելի է նաև 6 ամսով):
 1 տարվա բաժանորդագրության արժեքն է.
 «Ուրախ գնացք» - 8400 դրամ,
 «Իմ մոլորակը» - 9600 դրամ:
 Բաժանորդագրությունը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ ձևով.
 1.1. Երեսուն և ավելի բաժանորդ ապահովելու դեպքում յուրաքանչյուր բաժանորդի դիմաց տվյալ դպրոցի գրադարանը կհամալրվի «Էդիթ Պրինտ» գրատան 2000 դրամի արժողությամբ գրքերով: Օրինակ՝ երեսուն բաժանորդի դեպքում համալրումը կկազմի 60000 դրամին համարժեք գիրք:
 1.2. Ամսագրերում առաջարկվելու են խորագրեր, խաչքառեր, մրցութային հարցեր, որոնց հիման վրա որոշ ժամանակ անց բոլոր բաժանորդների միջև կկազմակերպվի վիկտորինա, որի հաղթողները «Էդիթ Պրինտ» հրատարակչության կողմից կստանան խրախուսական նվերներ:
 1.3. «Ուրախ գնացք» և «Իմ մոլորակը» ամսագրերը ոչ միայն ճանաչողական, զարգացնող ուղղվածության են, այլև հնարավորություն են տալիս շնորհալի երեխաներին տպագրել իրենց ստեղծագործությունները:
 Այսպիսով, երեխաները ձեռք են բերում զվարճալի և ճանաչողական այս հետաքրքիր ամսագրերը, իսկ դպրոցի գրադարանն անվճար համալրվում է «Էդիթ Պրինտ» գրատան ուսումնական, գեղարվեստական և մանկական հրաշալի գրականությունով:

Հարգանքներով՝ «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» հրատարակչություն

<p>ԼՈՒՍԱՐԱՐ Խմբագիր՝ ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉՍՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcstert@mail.ru</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրադարձություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 5 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 02.11.2012թ.:</p>
--	---	--	--	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: